

## ԱՐՇԱԿ ԲԱՆՈՒԶՅԱՆ

### ԵՂԻՇԵԻ «ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏԱՌԻԿԻ ՆՈՐ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի հնագույն պատառիկի առաջին հրապարակման համար՝ ինչպես արդեն նշել էինք մեր նախորդ հոդվածում<sup>1</sup>, պարտական ենք մեծանուն հայագետ Ֆ. Կ. Կոնիբերին<sup>2</sup>: Լիոնի Քաղաքային գրադարանում 17 համարի ներքո պահպանվող ձեռագիր Պատարագամատուցում (Անարգաբա, 1314 թ.) որպես պահպանակ օգտագործված եղիշեի այս պատառիկները հիրավի կարող են առ այսօր հայտնի բոլոր պատառիկներից հնագույնը համարվել: Պատառիկի շորս էջերի վերծանության վերջում առավել աչքի ընկնող տարբերությունները շարագրելուց հետո հեղինակը հետևյալ եզրակացություններն է անում՝ «Հատակոտորֆս որչափ ալ պակասաւոր են՝ կ'ապացուցանեն որ Եղիշի բնագիրը յառաջ շատ տարբեր էր անկէ՛ զոր այսօր տպագրութիւնմ մեր առջեւ կը դնեն: ... Համառօտ ըսելով հատակոտորֆս կը ցուցանեն՝ բաց ի մանր տարբերութիւններէն՝ նաեւ զայն, որ հեղինակիս գործը պարունակող ձեռագիրք չափազանց կերպով կերպարանափոխ եղած ընդմիջարկութիւններ առած են՝ հաւանականօրէն Ժ. դարէն ետքը»:

Այնուհետեւ այս հրապարակումը հիմք է դարձել բանասերների տարաբնույթ մեկնաբանությունների ու գնահատականների: Դարձել եղիշեի պատմութեան ժամանակի, խմբագրումների զանազան տեսությունների փաստարկներից մեկը կամ հիմքը: Ըստ Գ. Խալաթյանի՝ պատառիկում պահպանված հատվածը կարող է լինել եղիշեի նախնական բնագիրը՝ «որից օգտուել է Փարպեցին եւ որը Սեբեդոսին (է. դար) էլ ծանօթ էր. յետոյ նա ենթարկուել է փոփոխութիւնների եւ նորից մշակուել՝ ըստ երեւութին, ո՛չ վաղ քան է. դարը»<sup>3</sup>: Իսկ Ն. Ակինյանն առհասարակ համարում է, որ պատառիկի բնագիրը «ձեռա-

<sup>1</sup> Եղիշեի վարդանանց պատերազմի նորահայտ պատառիկները. – «Բանբեր Մատենադարանի», հ. 17, էջ 261-287:

<sup>2</sup> Ֆ. Կ. Կոնիբեր, Եղիշեի պատմության հատակոտորֆ. – «Համդէ Ամսօրեայ», 1893, թիվ 5, էջ 129-133: Ստորագրված է՝ «Փր. Կ. Կոնիբեր»:

<sup>3</sup> Գ. Խալաթյանց, Եղիշի աղբիւրների առթիւ. – «Համդէ Ամսօրեայ», 1895, թիվ 4, էջ 113-116:

գիրներէն պետք է առանձին խումբ մ'ենթադրել, որք կը ցուցնեն ընդհանուր աղաաղումներ Վարդանանց պատմութեան մէջ<sup>4</sup>: Ոմանք պատառիկի բնագիրը համարում են համառոտված, ոմանք խմբագրված կամ հավելված՝ ուշ շրջանի միջարկութուններով, ուրիշներն «անխնամ օրինակ»: Իրարամերժ տեսակետների, ինչպես նաև «Վարդանանց պատերազմի» ձեռագրախմբի հիմք դարձած մագաղաթյա հնաբույր երկու թերթերն ու նրանցում պահպանված բնագիրն էլ ավելի արժեքավոր է դառնում նոր ընթերցումներով, որոնք վկայված չեն առ այսօր հայտնի որևէ ձեռագրով կամ տպագիր հրատարակություն: Այն հիրավի մի նոր լույս կարող է սփռել «Վարդանանց պատերազմի» բնագրի հետ կապված տեսակետների և 450-ական թվականների պատմական իրադարձությունների վրա: Սույն հրատարակման նպատակը, սակայն «Վարդանանց պատերազմի» բնագրագիտական քննությունը չէ, այլ միմիայն պատառիկի նոր վերծանությունը բանասերների ուշադրությունը վերստին հրավիրել ի հայտ եկած չափազանց ուշագրավ բնագրային նոր տարբերությունների վրա: Ուստի ավելորդ չհամարեցինք՝ երբեմն կրկնաբանելով վերծանվող հատվածները, ներկայացնել այն մանրամասնորեն<sup>5</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, եղիշեի պատմության հնագույն այս մասունքի բնօրինակը Ֆ. Կոնիբերից հետո որևէ ուսումնասիրության չի արժանացել, այլ միայն օգտագործվել է «Հանդեսում» հրատարակված թերի վերծանությունը: Ի տարբերություն պատառիկների, ձեռագրի նկարագրությունն ու Պատարագամատուցի բնագիրը հրատարակվել է նախ Հայր Հովսեփ վարդապետ Գաթրճյանի կողմից «Պատարագամատուցը հայոց» արժեքավոր ուսումնասիրության մեջ<sup>6</sup>: Այնուհետև Ֆ. Մակլերը, ըստ երեւույթին ծանոթ չլինելով Հ. Գաթրճյանի նկարագրությանը, մի նոր նկարագրություն (միայն նկարագրությունը) հրատարակել է իր ցուցակում<sup>7</sup>: Ստորեւ ներկայացված բնկալ ձեռա-

<sup>4</sup> Ն. Ակիմյան, եղիշե, ֆինական ուսումնասիրություն. – «Հանդես Ամսօրեայ», 1905, ԺԹ. տարի, էջ 332:

<sup>5</sup> Բնագրագիտական ֆնությունը կանդրադառնամ չհրատարակված պատառիկների լույս ընծայումից հետո:

<sup>6</sup> Հայր Յ. վրդ. Գաթրճեան, Պատարագամատուցի Հայոց, «Քննական հրատարակություն մատենագրութեան և թարգմանութեան նախնեաց հայոց», հ Ա., Վիեննա, 1897թ.: Լիոնի թիվ 17 ձեռագիր Պատարագամատուցի նկարագրությունը տե՛ս էջեր 82-84:

<sup>7</sup> Ցուցակը կազմելիս Ֆրեդերիկ Մակլերը բնկալ ձեռագիրը նկարագրել է, իսկ պահպանակները ոչ, արձանագրել է սոսկ պահպանակների գոյության փաստը: Frédéric Macler, Notices de manuscrites Arméniens ou relatifs aux Arméniens..., Revue des études Arméniennes, Tome II, Fascicule 2, Paris-1922: Ցուցակում պատառիկի նկարագրությունը գտնվում է 282 էջում և ընդամենը մեկ նախադասություն է՝ «Deux feuillets de garde en parchemin au début, et deux à la fin, recouverts d'écriture erkatagir» (բառացի թարգմանությամբ՝ «երկու պահպանակ մագաղաթյա սկզբում, և երկուսը վերջում, երկարագիր գոյությամբ»): Ֆ. Մակլերը ըստ երեւույթին ծանոթ չի եղել ոչ Հ. Գաթրճյանի «Պա-

գրի նկարագրությունը կատարել ենք Մատենադարանի դրսի ժապավենների հավաքածուում պահպանվող Լիոնի թիվ 17 ձեռագրի միկրոֆիլմից<sup>8</sup>: Ստեպստեպ, որոշ անհրաժեշտ նկարագրական տվյալներ քաղել եւ համագրել ենք Հ. Հ. Գաթրճյանի եւ Ֆ. Մակլերի նկարագրություններից:

**Նկարագրություն բնկալ ձեռագրի**

Պատարագամատույց: 1314 թ.: Վայրը՝ Անարգաբա: Գրիչ՝ Նիկալայոս: Կազմող, ստացող՝ անհայտ: Թերթեր՝ 212<sup>9</sup>: Նյութը՝ թուղթ: Մեծություն՝ 17x12: Գրություն՝ միայնուն: Գիր՝ բոլորգիր: Գրություն տող՝ 20: Կազմ՝?: Աստառ՝ ոսկեթել կտավ: Մանրանկար, զարդագրեր, լուսանցազարդեր՝ չի:

Գրությունն հիշատակարան՝ 208աբ – «Փառք ամենասուրբ երրորդութեան հար և որդույ և հոգույն սրբոյ ամեն:

Աստանար կամաւք և խնամաւք ամենագաւրին Ա[ստուծոյ], յանկ ելեալ ս[ուրբ] մատենաս պատարագամատուցի, որ ունի ի յինքն բովանդակեալ զաղաւթս սուրբ քահանայապետից Ա[ստուծոյ], զոր յիւրաքանչիւր ժամանակս արարեալ են խորհուրդ պատարագի: Արդ, եղև սա գրեալ ձեռամբ մեղաւոր եւ անարժան քահ[անայ]ի Նիկալայոսի, <sup>իշատակ հեծ</sup> և ծնողացն իմոց, եւ եղբարն մերոյ Յովաննիսի քահ[անայ]ի, ի թուականիս Հայոց ՉԿԳ (1314), ի դղեակս Անարգաբա, ընդ հովանեաւ սրբոյ մարս լուս/208բ/ոյ տիրուհոյ եւ միշտ կուսին Մարիամու Ա[ստուա]ծածնիս, ի թագաւորութեանն Աւնի, եւ ի քահանայապետութեանն տ[եառ]ն Կոստանդեա, եւ ի մերոյ եկեղեցոյս յառաջնորդութեան տ[եառ]նրս մերոյ Յոնաննիսի եպ[իսկոպոս]ի, որոյ Տ[է]ր Ա[ստուա]ծ պահեսցէ զսա հանապազ: Յիշեսցիք աղաւթիւք զսպասաւորս սրբոյ եկեղեցոյս եւ զքահանայս սուրբս, զԿոստանդին և զմիւս Կոստանդին, և զԱնդրոնիկոս, և զԲասիլիոս, և զմիւս Բասիլիոս, և զՍտեփաննոս, և զսարկաւագունս՝ զՎասիլ, և զԹէոդորոս, և զՎարդան Սեպեռնցի, և զՅակոբ, և զամենայն հաւատացեալս Սրբոյ երրորդութեան, որում փառք և զարուսթիւն] այժմ և յաւի-

տարագամատույցի Հայոց» արժեքավոր ուսումնասիրությանը, ոչ էլ Ֆ. Կ. Կոնիբերի հրատարակմանը: Լիոնի ֆաղաֆային գրադարան իր մի այցելության ժամանակ (հավանաբար 1970-ական թվականներին) պատահիկը տեսել եւ գրադարանի համար մեկ անգամ եւս բովանդակությունը պարզել է Մատենադարանի փոխտնօրեն, Եջանկահիշատակ Բ. Չուգասյանը: Այս մասին ձեռագրի կազմի Ա. փեղկի կազմաստառին սուսնձված թղթի վրա գրված է «Les fragments coolés sur les plats de ce manuscrit sont partie de l’Histoire d’Élyssée, chroniqueur arménien du V-ème siècle. D’après B. Tchoukaszian. Sous-directeur de l’institut des manuscrits anciens de Matenadaran, à Erivan (Arménie).»

<sup>8</sup> Մատենադարան, Իւսի ժապավեն 483:

<sup>9</sup> Տեղ-տեղ թերթակալումը խառնած է:

տեանս յաւիտենից, ամէն: Յիշեսջիք ի Քրիստոյս և զԹորոս Երեց, որ փոխեցաւ առ Քրիստոյս: Եւ որ յիշէ զմեզ աղաւթիւք եւ զնա յիշեսցէ Քրիստոյս Աստուած ի յիւր միւսանգամ գալուստն, որ է աւրհնեալ յաւիտեան»<sup>10</sup>:

Հիշատակագրութիւններ գրչի՝ 28բ – «Ողորմե[ա]լ ի գերիս Նիկալայոս յերեսս անկեալ աղաչեմ զձեզ յիշեսջիք XΩ(Քրիստոս) ըզմեզ ի ս[ուր]բ և ի մաքրափալ աղաւթս ձեր և զծնողսն մեր և Աստուած զձեզ»:

39ա - «Բարեխաւութ[եամ]բ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ողորմեա Քրիստոյս Աստուած գրողի սորա Նիկալայոսի և ծնողացն մերոց և որ զամենն ասէ»:

64բ - «Բարեխաւութ[եամ]բ Ս[ուր]բ հարս մերոյ Բարսղի ողորմեա՛ Քրիստոյս Աստուած գրողի սորա Նիկալայոսի և ծնողացն մերոց. ամեն»:

76ա - «Ողորմեա՛ Քրիստոյս Աստուած գրողի սորա մեղաւորի»:

105ա - «Բարեխաւութ[եամ]բ տիեզերաքարոզ հարս մերոյ սըրբոյն Յոհաննու Ոսկիբերանին ողորմեա՛ Քրիստոյս Աստուած ամենայն հաւատացելոց և գրողի սորա և ծնողացն իմոց և ամենայն եղբարց անապատիս. ամէն»:

141բ - «Ով ս[ուր]բ քահանայք որք աղաւթեք ի ս[ուր]բ մատեանս յայս յիշեսջիք զարտասուաց արժանիս զՆիկոլ և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոյս»:

Հիշատակագրութիւններ հետագայի՝

1ա, էջի եզրերը խիստ քայքայուած – Յունարէն:

Բոլորգիր, «Հոգին ս[ուր]բ ի հօրէ և յորդոյ ոչ արարե[ա]լ, ոչ ստեղծե[ա]լ, այլ բխե[ա]լ»:

Բոլորգիր, «[Ամենայն] իրաւունք»:

Շղագիր, «Երանեալ է՞ այր որ ոչ գնաց ի խորհոտ»:

Երկի՞նք պատմեն զփառս Աստուծոյ և զարարածսն:

Ես <sup>հ[ա]լաստոյրս</sup> սարկաւաք է, իմ հարն գնեց զայս գն[...°]

Աստուածատուր երեցն [զհայրն ...°]»:

Պահպանակների վրա՝

Աա – հիշատակագրութիւններն ու գրչափորձերը վերից վար.

Ձախ անկյունում - «հ<sup>մ</sup>ր 17»;

Ձանագան բոլորգիր եւ շղագիր գրչափորձեր, մի մասը ջնջված՝ «ա», «անպ», «Սարսեց», «Ասացան» եւ այլն: Ստորեւ ներկայացնում ենք դրանց ավելի

<sup>10</sup> Հիշատակարանը հրատարակել է նաեւ Մատենադարանիս երախտավոր տնօրեն, ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանը «ԺԿ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հատորում, էջ 109-110: Լ. Ս. Խաչիկյանը հիշատակարանը նախընտրել է հղել Հ. Հ. վրդ. Գաթրնյանի նկարագրութիւնը: Չնայած՝ ըստ ամենայնի օգտագործել է Մատենադարանի «Դրսի ժապավենների» հավաքածուում պահպանվող Լիոնի թիվ 17 ձեռագիր Պատարագամատուցի միկրոֆիլմը (ԴԺ 483):

ընդարձակ մասերը:

- Աբ – «Ես առ Ա[ստուա]ծ կարդացի և Տ[է]ր լուաւ ինձ, ընդ երկ», «հաստեցա, հաստատեցաւ» եւ այլն:
- Բա – «Եւ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զնա և էլ վազվաղակի արիւն և ջուր և որ ետեսն վկայեաց և ճշմարիտ է վկայութիւն նորա»:  
«Աարսեցին անասեղեն բնութիւնքն ի քէն և անխրամատելի պահեցին զսահմանս պոմանի իւրեանց»:  
«Երկինք պ՛ս» եւ այլն:
- Բբ – «Շատ մարդ կա ի ք[ա]հ[ա]ն[ա]յացն որ զպատարագն սուտ կուայնէ զքարոզնին կու ասէ ու զաղօթնին ի տեղն կու թողու ու զԱ[ստուա]ծ կու խաբէ ու զմարդ»:  
«Ես առ Ա[ստուա]ծ կարդացի և Տ[է]ր լուաւ ինձ, [ընդ ...?]:»
- Գա – «Երանեալ է այր որ ոչ գնաց ...?» (տե՛ս նաեւ 1ա):
- Գբ – «Երկինք պատմեն...?» (տե՛ս նաեւ 1ա):
- Դբ – «Ես հաշտուորս սարկաւաք զայս [...] Ա[ստուա]ծատուր» (տե՛ս նաեւ 1ա):
- Կնիբ՝ 1ա – Շրջանաձեւ, «BIBLIOTEQU DE LA VILLE DU LYON»:

Պահպանակ - Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին»: Մասն՝ Ե-Զ եղանակներից: Ժամանակը՝ Ը-Թ դարեր: Պահպանված հատվածները կարդալ՝ Դբ-Գա (1ա)՝ Ե. 1-3; 146-148: Դա-Գբ (1բ)՝ 148-150; 153-159: Աա-Բբ (2ա)՝ 159-168: Աբ-Բա (2բ)՝ Ե. 169-171; Զ. 7-11; 42-43: Թերթեր՝ 4 (ԱԲ+ԳԴ), մեկական թերթեր լայնֆոլ ծավված: Կտրատված՝ ԱԲԳԴ-ն՝ վերին եզրով, մեկ տող պակաս, սյունակներից մեկը վնասուած, մեկում աչք, մյուսում ձախը: Պրականիշեր՝ չեն պահպանվել: Նյութ՝ մագաղաթ: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ ուղղագիծ երկաթագիր: Տող՝ Աաբ10; Բաբ9; Գաբ9; Դա10; Դբ9<sup>11</sup>:

Համառոտ ներկայացնենք պատառիկի առ այսօր հայտնի բնագրային կարևոր ընթերցումներն ու Ֆ. Կ. Կոնիբերի հիմնական դիտարկումները՝

- ա) Պահպանակները հատվածներ են պարունակում Եղիշեի «Վարդանանց պատերազմի» Ե. և Զ. եղանակներից: Ավելի ստույգ՝ Ե. եղանակի 146-

<sup>11</sup> Ձեռագրի եւ ձեռագրում պահվող պահպանակի բնօրինակը չենք տեսել, ուստի եւ մանրամասն ձեռագրագիտական տվյալներ չենք ֆաղել: Մեր նկարագրության մեջ պակասում են ձեռագրագիտական տվյալների այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են լուսանցքների, գրության դաշտի, տողերի բարձրության, միջտողային հեռավորության եւ այլ ոչ պակաս կարևոր նկարագրական հարցադրումներ, որոնք օգնում են էլ ավելի ստույգ եւ համակողմանիորեն ներկայացնել թե երբեմնի ձեռագրից մնացած մասումները՝ պատառիկ-պահպանակները եւ թե վերականգնել այդ ձեռագրի մոտավոր պատկերը:

171 և 2. 7-ի 11-րդ նախադասությունները<sup>12</sup>:

- բ) Աս. թերթի ձախ սյունակը վնասված է, եւ յուրաքանչյուր տողում պահպանված 1-5 գրերով հնարավոր չի լինում պարզել Ե. եղանակի 146-րդ նախադասությանը նախորդող հատվածը: Սակայն, ինչպես հրատարակիչն է պնդում, Մոսկվայի 1892 թվականի հրատարակության իր համեմատած օրինակը թույլ չի տալիս վերականգնել այդ հատվածը: Այսպիսով անվերծանելի է մնացել Աս. թերթի ձախ սյունակն ամբողջությամբ, չնայած պահպանված գրերի մի մասը ընթերցվել է: Հեղինակը վրիպել և չի արձանագրել պահպանակի ընդլայնակի ծալքի հետեւանքով բնկալ ձեռագրի մեջքին կարված մեկ տող, ուստի 20 տողի փոխարեն նշել է 19:
- գ) Աբ. էջում պակասում են 151-152 նախադասությունները՝ «Եւ քանզի գարնանային ... զվայ եւ զաւաղ բարեկամացն»:
- դ) Բբ. էջում պակասում է Ե. եղանակի 171-րդ նախադասությունից «բեկաւ անկաւ զաւրութիւն ուժոյն իւրոյ, ...» մինչեւ 2. եղանակի 7-րդ նախադասության կեսը «...հրամայեաց սպանանել ի նոցանէ...»: Այս ամբողջի փոխարեն Ե. եղանակն առանց 2.-ի վերնագրի, միմյանց է կապվում հետեւյալ հատվածով «...իսկ (°) ի գնդին Հայոցսն ինչ յամբոցի, եւ երթեալ զաւրն պարսից գալ ի խաղաղութիւն, որոյ եկեալ...»: Բբ. էջում չեն վերծանվել երկրորդ սյունակի վերջին երկու տողերը:
- ե) Որոշ հատվածներ վերծանել է վերապահումով: Դժվարընթեռնելի հատվածներում դրել է հարցականներ, կամ կասկած հայտնել իր ընթերցման վերաբերյալ<sup>13</sup>:

Վերոշարադրյալ ընթերցումները տարաբնույթ մեկնաբանությունների հիմք դառնալուց բացի երբեք բնօրինակի հետ չեն համեմատվել: Անընթեռնելի կամ անվերծանելի համարված հատվածների վերականգնման մի նոր փորձ մեզ հայտնի չէ: Լիոնի Քաղաքային գրադարանի կողմից մեզ տրամադրված

<sup>12</sup> Ինչպես նախորդ (տե՛ս ծնթ. 1), այնպես էլ ներկա հոդվածում օգտագործել ենք «Մատենագիր Հայոց» մատենաշարի նախադասությունների համարակալումը: «Մատենագիր Հայոց», Բ. Ա. Ե. Դար, Անթիլիաս-Լիբանան, 2003 թ.: Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկը գտնվում է 521-764 էջերում:

<sup>13</sup> Կոնիքերը Բբ. էջի վերծանության համար նշում է. «...10-րդ տողին համար՝ պետք է կրկին անգամ համեմատել հատակոտորը, վասն զի գուցէ տառերէն մէկ քանիսն սխալ կարդացած ըլլան»: Նույնպես Բբ. էջի երկրորդ սյունակի 18-19 տողերը: Իսկ որոշ տեղերում էլ, կարծում ենք, սխալ է վերծանում: Ինչպես օրինակ՝ նույն Բբ. էջի վերջին տողում «գի մինչ» բառակապակցությունը կարդացել է «գի մի ոչ»:

թվային բարձրորակ պատկերը<sup>14</sup> բավարարում է պատառիկի տեքստը վերծանելուն, սակայն պատկերներից ձեռագրագիտական-հնագրագիտական տվյալներ քաղելով և դրանցով մայր ձեռագրի չափերի մասին դատողություններ անելով վրիպումներից ապահովագրված չես կարող լինել: Ուստի հեռու ենք մնում պատառիկի մայր օրինակ ձեռագիր մատյանի վերակազմության թեական եզրակացություններից, որը կօգներ որոշ պատկերացում կազմել այդ մատյանի բնույթի մասին (Ճառընտիր է այն, Պատմագիրք, թե Հայսմավուրք):

Վերծանությունների տարընթերցումներում փակագծերի մեջ օգտագործել ենք Ե. Տեր-Մինասյանի կազմած գիտական հրատարակության բնագիրը եւ նրա տարընթերցումները<sup>15</sup>: Այն դեպքում, երբ ԳՂ բնագիրը կամ տարընթերցումը լրացնում է պատառիկի վնասված հատվածները, դրել ենք ուղիղ գրանշաններով: Ձենք վերցրել ԳՂ-ում օգտագործված ձեռագիր եւ սպագիր օրինակների տարբերանշանները, քանի որ սույն հոդվածի շրջանակներում դրանք չեն կարող դույզն ինչ պատկերացում տալ ձեռագրերի միջև եղած աղբյուրների և ընտանիքների մասին: Դյուրություն համար տարընթերցումները տրված են նախադասությունների հերթական համարներով: Պատառիկի վերծանությունում առկա լուսանցային գրերը իրենց տեղում դրված են տողից վերընթեր: ԳՂ-ի կետագրության հետ զուգահեռ վերարտադրել ենք նաև երկաթագիր պատառիկին հատուկ կետագրությունը, այն նշելով քառակուսի միջնակետով:

Կոնիբերի վերծանություն մեջ տեղ գտած վրիպումներից ամենաէականը պատառիկի առաջին թերթի ձախ սյունակի վերծանությունն է, որը մեծանուն հայագետը Ե. եղանակի 146-րդ նախադասությանը նախորդող հատվածով չի կարողացել վերականգնել: Ուստի պատառիկի 1ա էջի (պահպանակի Գբ-Գա էջերի)<sup>16</sup> ձախ սյունակի վերծանություն մեջ տեղ գտած վրիպումներին կանգնադառնանք առավել հանգամանորեն:

Ստորև ներկայացնում ենք պատառիկում վերծանված ամենակարևոր գրչության նմուշների պատկերները:

<sup>14</sup> 2007-ի սկզբին Մատենադարանի ֆրանսահայ բառեկամ, հայագետ Արմեն Մուրաֆյանի միջոցով եւ աշակցությամբ, ինչպես նաև Լիոնի Քաղաքային գրադարանի հին շրջանի ֆոնդի գլխավոր ավանդապան Պիեռ Գուինարի բարյացակամ օժանդակությամբ ստացանք պահպանակների բարձրորակ պատկերներ, առանց որոնց անհնար կլինեւ այս աշխատանքը կատարել, եւ որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

<sup>15</sup> «Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատուպետմբ ձեռագրաց, աշխատութեամբ Եր. Տէր-Մինասեանի, Երեւան, 1957 թ. (այս հրատարակության համար այսուհետ «գիտական հրատարակություն» կամ «ԳՂ» ձեռով):

<sup>16</sup> Այսուհետ պահպանակները հղում ենք ըստ վերականգնված էջերի՝ Գբ-Գա-ն 1ա, Գա-Գբ-ն 1բ, Աա-Բբ-ն 2ա, Աբ-Բա-ն 2բ: Վերծանություններն ու պատառիկների պահպանակները համապատասխանաբար տե՛ս հավելվածում:



Պատարիկ 1ա (Դբ-Գա) - Չախ սյունակ՝ տող 13 - «ընդ Ա[ստուծո]յ», տող 16 - «քն», տող 17 - «դեցեա», տող 19 - «պա»: Աջ սյունակ՝ տող 12 - «անդ», տող 14 - «մա», տող 13 - «այ»:



Պատարիկ 1բ (Դա-Գբ) - Չախ սյունակ՝ տող 3 - «ապ», տող 9 - «որ», տող 10 - «նց», 19 «յս»



Պատարիկ 2ա (Աա-Բբ) - Չախ սյունակ՝ տող 20 - «ուխտուն»: Աջ սյունակ՝ տող 3 - «ցան», տող 12 - «որբ», տող 14 «մի»:



Պատարիկ 2բ (Աբ-Բա) - Չախ սյունակ՝ տող 5 - «ացն» տող 6 - «ոյժ»:



Ներկայացված գրանշանների խումբը ցույց է տալիս, թե գրիչը ինչպիսի բծախնդրությամբ է հետևել գաղափար օրինակին: Հարազատ մնալով գաղափար օրինակի տողացի ընդօրինակման իր որդեգրած սկզբունքին, ընդօրինակման ընթացքում տողում շտեղավորված գրերը նա կամ կցագրել է, կամ ավելի մանր գրով գրել տողի վերին, ստորին կամ կից լուսանցքում: Հնագրագիտության տեսանկյունից չափազանց ուշագրավ են 1ա էջի ձախ սյունակի 19-րդ տողում «պա» և 1բ էջի ձախ սյունակի 9-րդ տողում «որ» գրերի կցագրումները, որոնք ավելի հատուկ են արձանագրություններին: Չի բացառվում, որ գրիչը պահպանել է նաև գաղափար օրինակի արտաքին պատկերը՝ ձեռագրի չափերը, գրատեսակը և այլն:

Վերադառնալով պատառիկի 1ա էջի ձախ սյունակին, նախ պետք է նկատենք, որ «Հանդէսում» հրատարակված վերծանության համապատասխան էջը, ի տարբերություն մյուսների, ունի 19 տող, մինչդեռ մյուսներն ունեն 20 տող: Պահպանակի 11-րդ տողը ընկել է բնկալ ձեռագրի մեջքին կարված ընդլայնակի ծալքի տակ և գրեթե չի երևում: Ուստի հրատարակված վերծանության 10-րդ տողից հետո պետք է նկատի ունենալ ևս մեկ տող, իսկ 11-րդ տողը խմբագրել 12, 12-ը՝ 13 և այդպես շարունակ մինչև 19-ը 20:

Սյունակի նոր վերծանությունը<sup>17</sup> ևս (որի ստույգ լինելու մեջ որևէ կասկած չունենք), թույլ չի տալիս ձախ սյունակի տեքստը վերականգնել Ե. եղանակի 146-րդ նախադասությանը անմիջապես նախորդող հատվածով: Ուստի պետք է դիմենք նման դեպքերում ընդունված տեքստերի վերծանության մեթոդներից մեկին, այն է՝ պահպանված գրանշանների կամ բառակապակցությունների միջոցով նախորդող ամբողջ տեքստում գտնենք այնպիսի մի հատված, որտեղ նկատի ունենալով յուրաքանչյուր տողի գրերի քանակը, հաջորդ տողերում ճշգրտորեն կհամապատասխանեն պահպանված տառակապակցություններն ու բառակապակցությունները: Այսինքն՝ եթե երկրորդ տողում պահպանվել է «...ԳԱՄ Ի» գրերը, ապա նկատի ունենալով, որ տողում կարող են շտեղավորվել առավելագույնը 18-20 գիր, ընտրված հատվածի տողատման արդյունքում երրորդ տողի վերջավորությունը պետք է լինի «...ՈՎՆ», իսկ չորրորդինը՝ «...ՌԵԱԼՔ» և այլն: Ինչ խոսք ավելի դյուրին է որոնումներ կատարել պահպանված ամբողջական բառերի կամ բառակապակցությունների միջոցով: Այդպիսիք այս սյունակում երկուսն են՝ 13-րդ տողում «ընդ Աստուծոյ» բառակապակցությունը, իսկ 18-ում «Քրիստոսի» բառը<sup>18</sup>:

<sup>17</sup> Ամբողջ սյունակի վերծանությունը տե՛ս Հավելվածում, որտեղ Կոնիբերի այդուսակաձե վերծանություններին զուգընթեր ներկայացված են նոր ընթերցումները:

<sup>18</sup> Կարելի է նաև ամբողջական բառ համարել 17-րդ տողի «ղեցեա» տառակապակցությունը, եթե համարենք, որ այն «եկեղեցեա» բառն է: Ի դեպ, Կոնիբերն այս գրանշանների

Եղիշէի «Վարդանանց պատերազմ»ում Ե. եղանակի 146-րդ նախադասութիւնից առաջ «ընդ Աստուծոյ» բառակապակցութիւնը հանդիպում է՝ Բ. եղանակի 286-րդ, Ե. եղանակի 2-րդ, 3-րդ և 90-րդ նախադասութիւններում: Այս բառակապակցութեամբ և տողում միջինը 20 գիր հաշվարկով տրոհված փնտրելի հատվածին համապատասխանում է Ե. եղանակի 2-րդ նախադասութիւնը: Ընդ որում, ինչպես վերը նշեցինք, նկատի է առնված, որ «ընդ Աստուծոյ» բառակապակցութիւնը գտնվում է 13-րդ տողում, իսկ տրոհման ընթացքում 1-12-րդ տողերի վերջավորութիւնները համապատասխանում են պատառիկում պահպանված տողերի վերջավորութիւններին:

Ստորև՝ ձախ սյունակում պատառիկի վերծանութիւնն է, իսկ աջում ԳՀ-ի համապատասխան տողը: Միջին սյունակում նշված է պատառիկի տողում հնարավոր գրերի քանակը.

Պատառիկ	Գիտական հրատարակություն
1. <sup>1</sup> [ի սկզբանէ է տեսանել]	16 [ի սկզբանէ է տեսանել]
2. [զբազումս բազում ան]ԳԱՄ Ի	20 զբազումս բազում անգամ ի
3. [բազում տեղիս: <sup>2</sup> որ սիր]ՈՎՆ	19 բազում տեղիս: (>Մարդիկ,) որ սիրովն
4. [Ա[ստուծոյ] իբրեւ զինու վա]ՌԵԱԼՔ▪	19 Աստուծոյ իբրեւ զինու վառեալք
5. [ոչ ինչ զանգիտելով ի] ՄԱՀՈՒ	21 (>էին) ոչ ինչ(>խնայեցին) զանգիտելով (>իբրեւ զանարի գողով վատասիրտք, կամ) ի մահ
6. [անէ անձանց,▪ կա]Մ Ի ՅԱ	15 անձանց, կամ [ի] յա
7. [փշտակութիւնէ ըն]ՉԻՅ▪	17 փշտակութիւն ընչից,
8. [կամ ի խողխողումս]Յ ՍԻՐԵ	19 կամ ի խողխողումս սիրե
9. [լեաց,▪ կամ ի գեր]ՈՒԹԻԻՆ	17 լեաց, կամ ի գերութիւն
10. [է ընտանեաց,▪ առ ո]ՉԻՆՉ	16 ընտանեաց, (>եւանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յատարու-թեան.) առ ոչինչ
11. [համարեցան զայս ամենայն]	20 [համարեցան զայս ամենայն]
12. [անցս շարշարանաց.▪]ԱՅՂ	17 անցս շարշարանացն. Այլ
13. [միայն միաբան կա]Լ ԸՆԴ <sup>Ա[ստուծոյ]Յ</sup>	19 միայն միաբան կալ ընդ Աստուծոյ,

Խմբի առաջին գիրը կարդացել է «լ», «լեցեա», կարող էինք ենթադրել, որ այն բառի վերջավորություն է «լեցեալ» ձեւով: Սակայն ոչ «լեցեալ» վերջավորությամբ, ոչ իսկ «լեցեա» մասնիկով որեւէ բառ ողջ «Վարդանանց պատերազմի» բնագրի մեջ չկարողացանք գտնել: Ուստի միակ հավանական տարբերակը մնում է «ղեցեա» ընթերցումը «եկեղեցեալ» ձեւով:

Այսպիսով, ինչպես նկատելի է տողերի մեծ մասը՝ 2-4-ը; 6-9-ը և 12-13-ը, իրենց վերջավորություններով համընկնում են: Գոյություն ունեցող աննշան տարբերությունները, ինչպես կտեսնենք ստորև, առկա են նաև ԳՀ տարրնթերցումներում: Տողերի վերջավորությունների համընկումները անառարկելիորեն հավաստում են, որ պատառիկի 1ա էջի (պահպանակներ՝ Գբ-Գա) ձախ սյունակը «Վարդանանց պատերազմի» Ե. եղանակի սկզբից է: Հինգերորդ և տասներորդ տողերում առկա տարբերությունները մեկնաբանելի են տեքստաբանական, շարահյուսական քննությամբ: Հիմնավորենք մեր գիտարկումները:

Պատառիկի առաջին տողը չի պահպանվել, այն վերականգնել ենք ԳՀ բնագրով: Երկրորդ տողի «գամ ի» գրերի խումբը համապատասխանում է առաջին նախադասության «զբազումս բազում անգամ ի» (20 գրանշանով) հատվածին: Երրորդ տողում մենք հակված ենք զեղչել «մարդիկ» բառը, քանի որ՝ նախ այս բառի հետ տողում գրերի քանակը դառնում է 25, ինչը հնարավոր չէ, և երկրորդ՝ այն բացակայում է նաև ԳՀ բնագրի համար օգտագործված ձեռագրերից մեկում<sup>19</sup>: Վերջապես առաջին և երկրորդ նախադասությունները արհեստականորեն, թերևս փոքր-ինչ շեշտադրմամբ (առաջին նախադասության մէջ այս բառը մեկ անգամ արդեն օգտագործվել է), տարանջատում և երկրորդ նախադասություն են ստեղծում: Այս բառի զեղչումով նախադասությունների իմաստային շարահարությունը չի խաթարվում, այլ միավորվում է «որ» շաղկապով և հիմք տալիս ենթադրելու, որ առաջին և երկրորդ նախադասությունները նախկինում մեկ նախադասություն են եղել, և որ հետագա խմբագրման ընթացքում ներմուծված «մարդիկ» բառի շնորհիվ տրոհվել, երկու՝ մեկը մյուսին հաջորդող նախադասություններ են դարձել:

(1) «[Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. եւ այնպէս աներկեղոս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զարս հրեշտակաց, որպէս անդատին ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում ան]ԳԱՄ Ի [բազում տեղիս]», (2) (>մարդիկ) [որ սիր]ՈՎՆ [Աստուծոյ զինու վա]ՌԵԱԼԹ• (>էին,) [ոչ ինչ] (>խնայեցին) զանգիտելով (>իբրեւ զանարի՝ գոլով վատասիրտք կամ) [ի] ՄԱՀՈՒ...»<sup>20</sup>:

<sup>19</sup> Ուշագրավ է, որ «մարդ» բառի հոգնակի «մարդք» և «մարդիկ» ձևերը զուգահեռաբար կիրառված են պատմության ամբողջ բնագրում:

<sup>20</sup> Առաջին նախադասության վերջում ԳՀ բնագրի համար օգտագործված վեց ձեռագիր և երկու տպագիր օրինակներ առհասարակ չունեն «զբազումս բազում անգամ» բառակապակցությունը, իսկ հինգ այլ ձեռագրեր և երկու ճառընտիր չունեն «զբազումս» բառը:

Պատառիկի շորրորդ տողն, առանց «իբրեւ» բառի համապատասխանում է ԳՉ բնագրին<sup>21</sup>:

Հինգերորդ տողում պատառիկը պետք է որ չունենար «էին» օժանդակ բայը, քանի որ «վառեալք» բայից հետո տողավերջում միջնակետ է դրված, իսկ գրերի քանակը տողում առանց այդ էլ արդեն 19 է: Ավելի ուշագրավ է «...զանգիտելով իբրեւ զանարի՝ գոլով վատասիրտք...» միջանկյալ նախադասությունը: Այն գտնվում է 4-րդ տողի «ռեալք» և 5-ի «մահու» վերջավորությունների միջև: Նկատի ունենալով, որ տողում արդեն ունենք հինգ գրանշան՝ «մահու», վերականգնվող հատվածի գրանշանների թիվը չի կարող անցնել 15-ը: ԳՉ բնագրի այս հատվածում առկա են 55 գրեր, որոնցով կազմված են «...էին, ոչ ինչ խնայեցին...» (16) և «...զանգիտելով իբրեւ զանարի՝ գոլով վատասիրտք, կամ ի...» (39) միջանկյալ նախադասությունները: Գրչական վրիպակի կամ տողի անկման մասին խոսք լինել չի կարող: Անհրաժեշտ է պարզապես երկու վերոհիշյալ նախադասություններից մեկը հիմնավորելով տեղագրել տողում: Նախընտրելի համարված միջանկյալ նախադասությունը թե գրերի քանակով, թե իմաստով ու շարահյուսական անխաթարություններ պետք է ամբողջացնի ոչ միայն տողը, այլև ողջ նախադասության տրամաբանական հորինվածքի մեջ հարազատորեն ընկալվի:

Ինչպես վերը նշել էինք՝ «էին» օժանդակ բայը պատառիկը կարող էր և չունենալ: Իր բնույթով «...ոչ ինչ խնայեցին...» բառակապակցություն-միտքը կարծես հարազատ է հաջորդող «գոհողություններ-գրկանքներ» թվարկվող մտքերի ոճին: Մինչդեռ «...զանգիտելով իբրեւ զանարի՝ գոլով վատասիրտք...» հատուածը բացատրական նշանակություն ունեցող մի միջանկյալ նախադասություն է, որ լրացնում-բացատրում է «ոչ ինչ խնայելու» միտքը, ուստի ավելի նման է հետագա մի հավելման և ամենայն հավանականություններ պատառիկում այն չէր կարող լինել<sup>22</sup>: Ի դեպ ԳՉ բնագրում «...ոչ ինչ խնայեցին զանգիտելով իբրեւ զանարի՝ գոլով վատասիրտք, կամ...» հատվածը՝ ըստ երևույթին հենց հավելման շնորհիվ, փոքր ինչ խրթին շարահյուսություն ունի, որի հետևանքով տուժել է նաև բնագրի աշխարհաբար փոխադրությունը<sup>23</sup>: Աշխարհաբար հրատարակության տեքստում այն հաջորդող «կամ ի

<sup>21</sup> Վեց ձեռագիր և երկու տպագիր օրինակներում չկա «իբրեւ» բառը:

<sup>22</sup> Նույն այս տողում պատառիկն ունի «մահու» փոխարեն «մահ», իսկ տարընթեցումներում «խնայեցին» անցյալ կատարյալ բայը չունեն վեց ձեռագիր: Ձեռագրերի մի զգալի մասը չունի «գոլով» բառը:

<sup>23</sup> Տե՛ս Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երեւան, 1971 թ.: Նույնը վերահրատարակված Երեւան, 1989 թ.:

մահ անձանց»<sup>24</sup> հատվածի հետ միասին փոխադրվել է «ամենևին չխնայեցին և անարի վատասիրտների նման շվախեցան մահից» ձեռով: Սակայն «կամ ի մահ անձանց» միջանկյալ նախադասությունը իր «կամ» կապով կարծես թե նախորդի պարզ շարունակությունը չէ:

Եթե, ՔՀ տարընթերցումները նկատի ունենալով, դուրս հանենք «խնայեցին» և «գոլով» բայերը, որոնք որոշ ձեռագիր և տպագիր օրինակներում չկան, ապա կունենանք հետևյալ պատկերը «...ոչ ինչ զանգիտելով իբրև զանարի՝ վատասիրտ, կամ...»: Ուշագրավ է, որ գրեթե նույն ձևով նախադասության այս հատվածը հանդիպում է Բ. Եղանակի 242-րդ նախադասությունում «...ոչ ինչ զանգիտելով իբրև զանարի վատասիրտ...»: Պատառիկի 5-րդ տողում առանց դժվարություն տեղավորվում է նախադասության «...ոչ ինչ զանգիտելով...» մասը և «մահու» վերջավորության հետ տողում կազմում 21 գրանշան:

Բնագրի նախնական պատկերն էլ ավելի է պարզվում, երբ տողում պահպանված «մահու» գրանշանների խմբով վերծանում ենք «ի մահուանէ» բացառական հոլովով բառը: Տողի վնասված մասում համապատասխանաբար տեղադրելով «...ոչ ինչ զանգիտելով...» մասը՝ ստանում ենք նախադասության տրամաբանությանը ավելի հարազատ շարադասություն՝ «ոչ ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց» (գեղջված է «իրեանց» դերանունը՝ «անձանց իրեանց»), որ աշխարհաբար լինում է «շվախեցան իրենց անձերի մահից»:

Բացառելով տողում «էին» օժանդակ բայը, ապա «...խնայեցին...» բայն ու «...իբրև զանարի՝ գոլով վատասիրտ, կամ...» բառերը, և վերջապես հոլովված բառերը համաձայնության բերելով<sup>25</sup>՝ վնասված սյունակի 5-րդ տողի «ոչ ինչ» բառից մինչև 10-ի «առ ոչինչ» բառերի միջև կունենաք՝

«...ոչ ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց, կամ ի յափշտակութիւնէ ընչից՝ կամ ի խողխողումաց սիրելեաց, կամ ի գերութիւնէ ընտանեաց, առ ոչինչ...»:

Հաջորդ ընդարձակ հատվածի սրբագրումն հենց 10-րդ տողում է, որտեղ պատառիկը չունի ՔՀ բնագրում առկա «...ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յատարութեան...» հատվածը: Այս նախադասությունը, իր բնույթով նման լինելով նախորդ սրբագրված նախադասությանը,

<sup>24</sup> Երկու ձեռագիր և մեկ տպագիր օրինակ չունեն «կամ ի մահ անձանց»

<sup>25</sup> ՔՀ բնագիրը փոխարեն պատառիկի եզակի բացառական հոլովով «ի մահուանէ անձանց»-ի ունի եզակի տրական հոլովով «ի մահ անձանց»: Նմանապես 6-րդ տողում պատառիկն ունի «կամ ի յափշտակութիւն ընչից» (պետք է լինի «կամ ի յափշտակութիւնէ ընչից») փոխարեն «կամ յափշտակութիւն ընչից»: Նույն ձևով նաև 8-րդ տողում պատառիկն ունի «ի խողխողումաց սիրելեաց» փոխարեն «ի խողխողումն սիրելեաց»:

գտնվում է 9-րդ տողի «...ութիւն» և 10-ի «...շինչ» վերջավորութիւն միջև: Բավարար է միայն ասել, որ այս հատվածը իր նախորդ «ի գերութենէ ընտանեաց» նախադասութիւն բացատրութիւնն է, որ կարծես ձեռագրի լուսանցքից ներս է սպրդել և, ըստ ամենայնի, բնագրի մեջ կատարված հետագա ներմուծում է:

Տասնմեկերորդ տողը պատահիկում չի երևում, քանի որ ընդլայնակի ծալքով կարված է բնկալ ձեռագրին: Սակայն ինչպես այս տողի տեքստը, այնպես էլ հաջորդող երկուսը (12-13-ը) առանց որևէ դժվարութիւն տեղակայվում են տողերի վրա, համընկնում տողում գրերի քանակով, իսկ 13-ը նաև տողերի վերջավորութիւնը:

Այսպիսով պատահիկի ձախ սյունակի 1-13 տողերի վերականգնված տեքստն ունի հետևյալ պատկերը՝

«1. Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր եւ այնպէս աներկեւզս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զաւրս հրեշտակաց, որպէս անդստին [ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում անգամ ի բազում տեղիս, 2. որ սիրովն Ա[ստուծոյ] իբրեւ զինու վառեալք՝ ոչ ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց,՝ կամ ի յափշտակութիւնէ ընչից՝ կամ ի խողխողումաց սիրելեաց, ՝ կամ ի գերութիւնէ ընտանեաց,՝ առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս շարշարանաց.՝ այդ միայն միաբան կալ ընդ Ա[ստուծոյ] ...]»<sup>26</sup>:

Ամփոփենք կատարված աշխատանքն ու արդյունքները.

Ա. Վերծանութիւն համար որդեգրված մեթոդով, այն է՝ պահպանված գրերի, տողում գրերի մոտավոր քանակի և ԳՀ բնագրում հայտնաբերված համապատասխան հատվածի համադրութիւնը ու տողերի վերջավորութիւնների համընկումով, տեքստն անառարկելիորեն ճիշտ է վերծանված: Բանավեճի առարկա կարող են լինել միայն մեր կողմից առաջարկված քերականական և ուղղագրական միջամտութիւնները:

Բ. Մեր կարծիքով հետագա խմբագրման արդյունքում ներմուծվել-հավելվել, կամ անճանաչելիորեն վերաշարադրվել են «...մարդիկ...», «...ոչ

<sup>26</sup> Ուղիղ փակագծերի մեջ են առնված պատահիկում առկա տեխստն ու վերծանությունը: Ընդգծված են նաև պատահիկի վնասված հատվածների տեսանելի գրերն ու մեր ֆեռակական խմբագրումները: Նույնը տե՛ս նաև հավելվածում գետեղված պատահիկների վերծանության տեխստերում եւ պատկերներում: Երկրորդ նախադասությունը հետավոր նմանություն և աղերսներ ունի Գ. Եղանակի 52-րդ նախադասության հետ՝ «Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիտեն, եւ ոչ ի տանջանաց երկնչին, եւ ոչ ի ստացուածոց պատկառին, եւ որ յետին չար է քան զամենայն չարիս՝ զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է, որ կարէ նոցա դիմակաց լինել»:

ինչ խնայեցին զանգիտելով իբրև զանարի՝ գոլով վատասիրտ, կամ...» և «...ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յաւտարութեան...» հատվածները: Սրանք չեն կարող ձեռագրի ընդօրինակման ընթացքում գրչի կողմից վրիպում համարվել: Պատառիկի բնագիրը չի կարող նաև կրճատված համարվել, քանի որ վերոհիշյալ հատվածներն իրենց բնույթով շատ ավելի հավելագրման նման են:

Գ. Ապացուցված համարելով, որ ձախ սյունակը սկսվում է Եղիշեի «Վարդանանց պատերազմի» Ե. եղանակի առաջին և երկրորդ նախադասություններով, նկատի ունենալով, որ մնացած ութ տողերում կարող է տեղավորվել առավելագույնը երկու նախադասություն, իսկ աջ սյունակը սկսվում է 146-րդ նախադասությամբ՝ միանգամայն պարզ է դառնում, որ պատառիկն առհասարակ չունի Ե. եղանակի շուրջ 141 նախադասություն:

Ինչպես տեսնում ենք առաջին երկու նախադասությունները միասին պատառիկում մի ամբողջ միտք են արտահայտում, և կարող էին լինել մեկ նախադասություն: Ավելի ջանք է պահանջում 14-20 տողերի, ինչպես նաև աջ սյունակի առաջին տողի վերծանումը: Մինչ հաջորդող ութ տողերի (յոթը ձախ, մեկը աջ սյունակում) վերծանությանն անդրադառնալը, վերադառնանք երկրորդ նախադասության վերջին: Չէ՞ որ «ընդ Աստուծոյ» բառերով այն չի ավարտվում, այլ շարունակվելով որևէ կերպ չի համընկնում 14-20 տողերի վերջավորություններին, ըստ այդմ և պատառիկում այն չի կարող լինել: Ահա պատառիկում պակասող երկրորդ նախադասության հատվածը.

«... զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. եւ ամենայն երեւելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց»:

Նույն հատվածի ոճով գրված 3-րդ նախադասությունը ևս թույլ չի տալիս վերականգնել 14-20 տողերը:

3 «Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, եւ զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, եւ ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, եւ ընկենոյ զանձինս յաւտարութիւն՝ ընդ Աստուծոյ գիտից»:

Ինչ վերաբերում է 4-րդ նախադասությանը, ապա այն իր բնույթով շարագրանքի մեջ մի միջարկություն է:

4 «Որպէս յայսմ ժամանակի տեսաք աշաւ մերովք, զի զնոյն

նախատակությունն նախատակեցաւ եւ աշխարհս Հայոց»<sup>27</sup>:

Ուստի խնդրելի հատվածը պետք է փորձել վերականգնել 5-146 նախադասությունների միջակայքում: Փորձենք այն վերականգնել վերջից՝ 146-րդ նախադասության միջոցով: Այն՝ պատառիկ ԳՀ բնագիր համադրությամբ հետևյալ պատկերն ունի.

Պատառիկ	ԳՀ բնագիր
146 [...]	146 Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցաւքն
1. [...]	1. [...]
2. ԲԱԶՄԻՆ ՈԶ ՍԱԿԱԻ ՆԱԽ	2. ոչ սակաւ նախ
3. ՃԻՐՍ՝ Ի ՏԵՂԻՈՋՆ ԳՈՐԾԷՐ Ի	3. նիրս ի տեղւոջն գործեաց,
4. ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՅՈՐ	4. յոր
5. ՈՒՄ ԵՒ ԻՆՔՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵԻ	5. ում տեղւոջ եւ ինքն իսկ արժանի եղեւ
6. ԱՌՆՈՒՎ ԶԿԱՏԱՐԵԱՎ ՆԱՀԱ	6. առնույ զկատարեալ նախա
7. ՏԱԿՈՒԹԻՒՆՆ:	7. տակութիւնն:

Այս համադրությունից պարզ երևում է, որ 146-րդ նախադասությունը խմբագրված է, և նախորդող «Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցաւքն» հատվածը չի կարող նույնությամբ պատառիկում լինել: Առկա տարբերություններն են՝

- «Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցաւքն...» - Պատառիկում առաջին տողը, որտեղ կարող էր լինել այս նախադասության մասը չի երևում<sup>28</sup>:
- Պատառիկի երկրորդ տողի սկզբում առկա է «րազմին» գրանշանների խումբը, որն ԳՀ բնագիրը չունի: Ըստ ամենայնի՝ նախորդ տողի վերջում պետք է լինի «պատե» գրերի խումբը, հաջորդ տողի սկզբի գրերի խմբի հետ կազմելու համար «պատերազմին» բառը: Սակայն, ինչպես տեսնում ենք, 146-րդ նախադասությունը ԳՀ բնագրում առհասարակ չունի «պատերազմին» բառը:<sup>29</sup>
- Հաջորդող «ոչ սակաւ նախնիրս» հատվածը նույնությամբ կրկնվում է թե պատառիկում, թե ԳՀ բնագրում:
- Վերջին «ի տեղւոջն գործեաց» բառակապակցությունը ԳՀ բնագրում

<sup>27</sup> Այս նախադասությունը ոչ այն է եղիշխնն է, ոչ այն է խմբագրի կողմից իր ժամանակների իրադարձություններն ակնարկող դիտարկում-մեջբերում:

<sup>28</sup> ԳՀ բնագրի տարբերություններում կան երկու մեկական ձեռագրերով վկայված ոչ էական տարբերություններ՝ «իւր» կամ «իւրով» փոխարեն «իւրովք»:

<sup>29</sup> Պատառիկի բնագրում այս բառը կա երկու տեղում: Այլ ձեռագրերով այսպիսի տարբերություն նկատված չէ:



ունի մի շարք տարրնթերցումներ<sup>30</sup>:

- Միայն պատառիկն ունի «ի մեծ պատերազմին» բառակապակցութիւնը:
- Պատառիկն ունի «յորում եւ ինքն» փոխարեն «յորում տեղոջ եւ ինքն իսկ»<sup>31</sup>:
- Մնացած «արժանի եղեւ առնույ զկատարեալ նահատակութիւնն» հատվածը նույնն է թե պատառիկում և թե ԳՀ բնագրում<sup>32</sup>:

Նախադասութիւնն այսօրինակ մանրամասն համադրումը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք նույն հատվածում, նույն միտքը արտահայտող սակայն էական նրբերանգներով մեկը մյուսից տարբերվող երկու տարբեր բնագրերի հետ: Պատառիկի ձախ սյունակում վնասված յոթ տողերի և աջ սյունակի առաջին տողի տեքստը վերականգնելու համար մենք ունենք երկու հնարավոր փնտրտուքի «բանալի» բառեր: Դրանք են «Քրիստոսի» բառը ձախ սյունակի 18-րդ տողում և «րազմի» անհայտ բառի (ենթադրաբար՝ «պատերազմին») վերջավորությունը աջ սյունակի երկրորդ տողում: 5-146 նախադասությունների միջակայքում «Քրիստոսի» բառը գործածված է վեց անգամ, իսկ «րազմին» վերջավորությամբ բառ միայն «պատերազմին» բառն է և գործածված է հինգ անգամ: Իր հերթին «պատերազմ» բառը այլ հոլովմամբ և այլ վերջավորություններով գործածված է ևս վեց անգամ:

«Քրիստոսի» բառով հնարավոր շեղավ որևէ փոքր ի շատ է համընկնող հատված հայտնաբերել: Իսկ «պատերազմ» բառն այդ հնարավորությունը ընձեռնեց: Այն զանազան հոլովումներով հանդիպում է՝ 14-րդ նախադասությունում՝ «պատերազմունն», 22-ում՝ «պատերազմիս», 47-ում՝ «պատերազմական», 106-ում՝ «պատերազմն», 107-ում՝ «պատերազմի» և «պատերազմ», 121-ում՝ «պատերազմէն» ձևերով: Իսկ «պատերազմին» ձևով ինչպես արդեն նշել էինք հանդիպում է հինգ տեղում՝ 8-րդ, 10-րդ, 12-րդ, 50-րդ և 73-րդ նախադասություններում: Մեր պրպտումների ընթացքը ավելորդաբար չշարադրելու համար, միանգամից ներկայացնենք 5-10-րդ տողերի միջակայքը, որով հնարավոր է վերականգնել պատառիկի պակասող հատվածը:

Այս դեպքում բավարար չէ այն սկզբունքը, որ մինչ հիմա գործածում էինք: Խմբագրված տեքստը եթե պարզապես ներմուծված կամ կրճատված

<sup>30</sup> Մասնավորապես տասը ձեռագիր, երկու տպագիր և չորս ճառընտիր օրինակներ ունեն պատառիկի հետ նույն «գործէր» ձևը, իսկ յոթ ձեռագիր և մեկ տպագիր օրինակ ունեն ԳՀ բնագրի հետ նույն «գործեաց» ձևը:

<sup>31</sup> Ինը ձեռագիր, մեկ տպագիր եւ մեկ ճառընտիր չունեն վերջին «իսկ» բառը:

<sup>32</sup> ԳՀ բնագրի տարրնթերցումներում միայն մեկ ձեռագիր ունի «նահատակութեանն պակսկ» ձևը:

հատվածներ ունի, ապա շատ ավելի դյուրին է տողում եղած գրերի քանակով և պահպանված գրերի համընկումով վերականգնել տեքստը: Իսկ եթե տեքստը անճանաչելիորեն աղճատված է կամ վերաշարադրված, ապա մնում է պատանդիկում պահպանված ընդհանուր բովանդակությանը իր շարադրանքով առավելագույն մոտ հատվածում փնտրել-գտնել այնպիսի բառեր, որոնք կարող են ունենալ պատանդիկում պահպանված տողերի վերջավորություն-գրանշանները: Ազատ խմբագրված տեքստում կարող են լինել նաև բառերի հետևառջումներ: «Անհայտ խմբագիրը» կարող էր դուրս թողնել որևէ հատված և տեղը նույն միտքը վերաշարադրեր այլ կերպ, կամ ընդարձակելով շարադրած միտքը հավելեր և անճանաչելիորեն ճոխացներ այն: Սակայն նախնական տեքստի ինչ-ինչ բառեր ու արտահայտություններ նոր շարադրանքում իր իսկ խմբագրման մեջ, անպայմանորեն պետք է որ օգտագործեր:

Վերծանության համար ընդունելով նախնական այսօրինակ չափանիշներ՝ փորձենք մեր ունեցած գրանշանների խմբերով վերականգնել վնասված տողերը: Ըստ այդմ 5-10-րդ տողերի միջակայքում մենք փնտրելու ենք «...ան՝ ոչ...», «...վ անե...», «...ելով<sup>ն</sup>...», «...դեցեա...», «...Քրիստոսի՝ յո...», «...չափ պա...», «...ու...» և «...րազմին...» վերջավորություններով կամ մասեր ունեցող բառեր, որոնց համադրմամբ ոչ միայն տողերի վերջավորությունները պետք է համընկնեն, այլև 3-րդ նախադասությունը 146-ին պետք է կապեն տրամաբանական շարահարությունը: Իսկ վերջավորությունների կամ բառերի մասերի կուտակումները շարադրանքի մեջ մեկը մյուսին կամ պետք է հաջորդեն, կամ իրար շատ մոտ լինեն:

Վերջից՝ աջ սյունակի առաջին տողից գալով նախ տեղադրենք «պատե» մասնիկը որպեսզի երկրորդ տողի «րազմին» մասնիկի հետ կազմի «պատե-րազմին» բառը: Նկատենք, որ տողի առավելագույնը 20 գրանշաններից չորսն արդեն հայտնաբերված են: Ապա հաշվի առնելով, որ ձախ սյունակի վերջին 20-րդ տողը վերջանում է «ու» գրով՝ փորձենք տեղադրել 10-րդ նախադասության «պատե-րազմին» բառից հետընթացով «համագու-նդի հասանելին ի գործ պատե-րազմին»: Ճիշտ 20 գրանշանով այս հատվածը համընկնում է աջ սյունակի առաջին տողին, իսկ ձախ սյունակի վերջին տողից ունենում ենք «համագու» գրանշանների խումբը, ընդամենը յոթ գրանշան: Մնում է գտնել շուրջ 13 գրանշան այս տողի համար: Ձախ սյունակի 19-րդ տողը վերջանում է «...չափ պա...» գրանշանների խմբով: Բառի սկզբում «պա» մասնիկն ունեցող ամենահարմար բառը 8-րդ նախադասության «պատրաստութեամբ» բառն է, որ իր տեղը գրվելով կազմում է 20-րդ տողը՝ «պա – տրաստութեամբ համագու», նորից ճիշտ 20 գրանշանով: Նախընթացի տրամաբանությամբ 18-րդ տողում ունենք «...Քրիստոսի՝ յո...»: Վերջին «յո» մասնիկը բառա-

սկզբում ունեցող որևէ բառ չունի, թեև ամենայն հավանականությամբ այն «յո-րում» հարաբերական դերանունն է: Հատկապես որ այն կրկնված է նաև նախադասության շարունակության մեջ՝ աջ սյունակի չորրորդ տողում և շարահյուսական նույն տրամաբանության մեջ է գտնվում: Ընդ որում «պատրաստութեամբ» բառին նախորդում է «ամենայն» բառը, որի տեղը հանգիստ կարող էր լինել «անչափ»: Ուստի կիսով չափ վերականգնված 19-րդ տողը կունենա հետևյալ պատկերը՝ «Ք[րիստոս]ի ք յո - րում ... անչափ պա...»: «Քրիստոսի» բառի հետ միասին այս հատվածի ընդհանուր տրամաբանությունը հուշում է, որ պակասող բառը 6-րդ նախադասությունում երկու անգամ օգտագործված «ֆաջալեթեալ» բայն է<sup>33</sup>, որի հետ միասին տողում գրերի քանակ հասնում է ճիշտ 20-ի: Ի մի բերենք ձախ սյունակի այս հատվածի վերականգնված պատկերը: Ահա այն.

- |                                 |                                |
|---------------------------------|--------------------------------|
| 18. [... ]Ք[ՐԻՍՏՈՍ]Ի.ՅՈ         | 2. [նդֆ հասանելով ի գործ պատե] |
| 19. [րում ֆաջալեթեալ, ան]ՉԱՓ ՊԱ | 3. ԲԱԶՄԻՆ ՈԶ ՍԱԿԱԻ ՆԱԽ...      |
| 20. [տրաստութեամբ համագ]ՈՒ      |                                |

Մնում է վերականգնել 14-18 տողերը, որտեղ 18-րդ տողում ունենք չորս գիր՝ «...Քի» յո...»<sup>34</sup>: Նախորդող 17-րդ տողը վերջանում է «...ղեցեա...» գրանշաններով, որտեղ դ-ն երևում է ե-ի տակ իր ելուստով: Այս մասնիկով միայն «եկեղեցի» բառն է որ զանազան հոլովումներով օգտագործված է բնագրում: Որևէ այլ բառ «...ղեցեա...» մասնիկով հայտնաբերել հնարավոր չեղավ: Ենթադրում ենք, որ պատառիկում այն օգտագործված պետք է լինի գործիական հոլովով «եկեղեցեալ»:

16-րդ տողի «ելովֆն» վերջավորությունը ինքնին կարող է լինել նաև բառի վերջավորություն և ոչ թե պարզապես մաս: Այսպիսի վերջավորությամբ ամենահարմար բառը 6-րդ նախադասությունում գործածված «միաբանեալֆ» բառն է, միայն թե «միաբանելովֆն» ձևով: «Միաբանելովֆն» բառի և 17-րդ տողավերջի «եկեղեցեալ» բառերի միջև տեղադրում ենք 7-րդ նախադասության «յԱրտաշատ ընդ» բառերը, բացատրությունը թողնելով փոքր ինչ վերջում: 15-րդ նախադասության «...վ անե...» գրանշանների խումբը առավելագույնս կարող է համապատասխանել 7-րդ նախադասության «ժողովել» բառին, միայն թե «ժողով անել» ձևով: Իսկ 14-ի «...ան» ոչ...» գրանշանների խումբը համընկնում է 5-րդ նախադասության «իբրեւ ետես մեծն Վարդան» և նույնի «ոչ ինչ թերահաստութեամբ զանգիտեաց» բառերին:

<sup>33</sup> 6-րդ նախադասությունում այն հետևյալ տեսքն ունի «...ֆաջալեթեալ յանձն իւր եւ ֆաջալեթեալ...»:

<sup>34</sup> «Քրիստոսի» բառը պատվո նշանով է:

Միայն թե անհրաժեշտ է պատառիկից բացառել «մեծն» ածականը և «քերականավատությամբ» մակբայը: Վերականգնման համար առանձնացված այս բոլոր բառերը հերթականությամբ տեղադրելով ստանում ենք հետևյալ պատկերը.

- |                                    |                                |
|------------------------------------|--------------------------------|
| 14. [Իբրև ետես Վարդ]Ան.ՈԶ          | 2. [նդհ հասանելով ի գործ պատե] |
| 15. [ինչ զանգիտեաց, այլ ժողո]Վ ԱՆԵ | 3. ԲԱԶՄԻՆ ՈԶ ՍԱԿԱՒ ԵԱԽ         |
| 16. [ով ամենայն միաբան]ԵՆՈՎՔՆ      | 4. ՃԻՐՍ Ի ՏԵՂԻՈՋՆ ԳՈՐԾԷՐ Ի     |
| 17. [յԱրտաշատ ընդ եկեղ]ԵՅԵԱ        | 5. ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՅՈՐ         |
| 18. [ւ սրբոյ ուխտին Յի] ՔԻ՝ ՅՈ     | 6. ՈՒՄ ԵՒ ԻՆՔՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵԻ     |
| 19. [րում ֆաշալեբեալ ան]ԶԱՓ ՊԱ     | 7. ԱՌՆՈՒՎ ԶԿԱՏԱՐԵԱՎ ԵԱՀԱ       |
| 20. [տրաստութեամբ համագ]ՈՒ         | 8. ՏԱԿՈՒԹԻՒՆ:                  |

Փորձենք հիմնավորել մեր կատարած ընթերցումները մի այլ մեթոդով: Նախ կատարված աշխատանքի ամբողջական պատկերն ունենալու համար միահար շարադրանքով ներկայացնենք պատառիկի վերծանված տեքստը: Այնուհետև համադրելով ԳՉ բնագրի հետազոտվող հատվածի հետ փորձենք երկրորդական նախադասությունների տարանջատմամբ վեր հանել հիմնական մտքերը, և տեսնենք արդյոք վերծանված տեքստի շարադասությունը չի՞ տուժում և հաղորդում է ԳՉ բնագրի հիմնական ասելիքը:

« 1. Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր եւ այնպէս աներկեղս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զարս հրեշտակաց, որպէս անդստին [ի սկզբանէ է տեսնել զբազումս բազում անգամ ի բազում տեղիս, 2. որ սիրովն Ա[ստուծոյ] իբրեւ զինու վառեալք՝ ոչ ինչ զանգիտելով ի մահուանէ անձանց,՝ կամ ի յափշտակութիւնէ ընչից՝ կամ ի խողխողումաց սիրելեաց,՝ կամ ի գերութիւնէ ընտանեաց,՝ առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս շարշարանաց.՝ այդ միայն միաբան կալ ընդ Ա[ստուծոյ]:

5-10. Իբրև ետես Վարդան. ոչ ինչ զանգիտեաց, այլ ժողով անելով ամենայն միաբանելովքն յԱրտաշատ ընդ եկեղեցեաւ սրբոյ ուխտին Յ[խուս]ի Ք[րիստոս]ի՝ յորում ֆաշալեբեալ անչափ պատրաստութեամբ համագունդք հասանելով ի գործ պատե(146.)րագմին ոչ սակաւ նախնիրս ի տեղտջն գործէր ի մեծ պատերազմին, յորում եւ ինքն արժանի եղև առնույ զկատարեալ նահատակութիւնն»]:

Ստորև ԳՉ բնագրի քննվող հատվածում ընդգծել և ապա առանձնացրել ենք այն բառերն ու բառակապակցությունները, որոնք համարել ենք տվյալ նախադասություններում վերծանության համար օգտակար: Զ-րդ նախադասությունը ճակատամարտին մասնակցած զորավարների անվանացանկն է, որ

պատառիկի պակասող հատվածի լրացման համար նշանակություն չունի, ուստի և նկատի չենք առել:

- 5 «Քանզի իբրև ետև մեծն Վարդան գերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց», - իբրև ետև Վարդան ոչ ինչ զանգիտեաց:
- 6 «Թէպէտ և ստուգեալ գիտաց զբազմաց այլոց ևս զերկմտութիւն, որ դեռ ևս ընդ նմա միաբանեալք էին, քաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զգարսն իւր. քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն». - քաջալերեցաւ ի սուրբ ուխտէն:
- 7 «Հրաման տուեալ ամենայն զաւրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր, և զիրաքանչիւր զաւրս տայր նոցա, զի դեռ ևս ինքն ունէր զամենայն աշխարհն». - ժողովել յԱրտաշատ:
- 8 «Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զաւրաւք եւ ամենայն պատրաստութեամբ, նոքա եւ որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն». - ամենայն պատրաստութեամբ:
- 10 «Սոքա ամենեքեան համագունդ հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու եւ լինէր հանդէս համարուն վաթսուն եւ վեց հազար այր ընդ հեծեալ եւ ընդ հետեակ». - համագունդ հասանէին ի գործ պատերազմին:

Ուշագրավ է, որ ընտրված գլխավոր նախադասությունները մեկը մյուսին կցելով, կապելով միմյանց «այլ» և «եւ» շաղկապներով՝ ստանում ենք համահունչ, կանոնավոր մեկ նախադասության ուրվագիծ՝ «...իբրև ետև Վարդան ոչ ինչ զանգիտեաց – [այլ] քաջալերեցաւ ի սուրբ ուխտէն – [եւ] ժողովել[ա]լ յԱրտաշատ - ամենայն պատրաստութեամբ համագունդ - հասանէին ի գործ պատերազմին»:

Պատառիկում Եղիշեի պատմության բնագիրը համառոտված է, թե՞ բուն բնագիրն է, ԳՉ բնագիրն է հետագա խմբագրման-հավելման արդյունք, թե պատառիկը համռոտման: Այս հարցերի պատասխանը տեքստաբանական մանրակրկիտ ուսումնասիրությունը կարող է միայն տալ: Առայժմ հեռու մնալով նման վարկածի քննարկումից, փորձենք հնարավոր բոլոր փաստարկներով հիմնավորել պատառիկի վերծանությունը:

Բովանդակային իմաստով ինչպես տեսնում ենք վերծանված հատվածը սահուն շարադասությամբ կապվում է թե նախորդող նախադասություններին և թե հաջորդող: Ինչը այնքան էլ սահուն չէ ԳՉ բնագրում: Ինչպես նկատել էինք, 4-րդ նախադասությունը առհասարակ մի միջանկյալ նախադասություն

է, որ անցյալում և «հեղինակին» կամ «խմբագրին» ժամանակակից իրադարձությունների գոհերին «նահատակություն» բնորոշումն է տալիս: 5-րդ նախադասությանը նախորդող նախադասություններում ոչ մի խոսք չկա «իր աշխարհի» երկպառակության կամ թերահավատության արժանի որևէ բանի մասին: Այն ավելի շուտ կարող էր կապվել Գ. եղանակի բովանդակության հետ: Հակառակ դեպքում պետք է ենթադրել, որ, ի հակադրություն «զբազումս բազում անգամ ի բազում տեղիս» գոհողության պատրաստ նախնիների, հեղինակի ժամանակակիցները նույն տոգորումով պատրաստ չէին պատերազմի: Իսկ ահա նախադասության ընդգծված գլխավոր անդամներով այն լիուլի կապվում է առաջին երկու նախադասությունների հետ: Այսինքն՝ տեսնելով հերոսական գոհողությունների ու զրկանքների պատրաստ զինակիցներին, որ նկարագրված են առաջին երկու նախադասություններում, նա՝ Վարդանը, ոչնչից չի վախենում. - «Իբրև ետև Վարդան ոչ ինչ զանգիտեաց»: Ասել է, թե առաջին երկու նախադասություններում բերված գոհողության օրինակները վերաբերում են ոչ թե հեռու անցյալին, այլ հեղինակին ժամանակակից իրադարձություններին, որոնց մասին նա պատմել է կամ պատաստվում է պատմել առաջիկա շարադրանքում:

Բնագրի այսօրինակ քննությունը ցույց է տալիս թե որքան տարբեր է պատառիկի և ԳՀ բնագրի նույն հատվածի բովանդակության տրամաբանությունը: Այստեղ ոչ միայն կարևոր են առկա բնագրային տարբերությունները, այլև իմաստային, պատմության նկարագրության և մեկնաբանման ոճերը, դեպքերի, իրադարձությունների ներկայացման տրամաբանությունն ու դրանց հաջորդականությունը: Այսօրինակ ակնբախ տարբերությունները թույլ չեն տալիս մեզ պատառիկի բնագիրը համարել պարզ համառոտում: Ավելի շուտ հուշում են, թե մենք գործ ունենք «Վարդանանց պատերազմի» մի նոր, մինչ այժմ հայտնի բնագրից տարբեր բնագրի հետ:

Կարելի է թերևս շարունակել և նոր փաստարկներ բերել հօգուտ մեր վերծանության, սակայն, բերված փաստարկները բավարար համարելով, պարզապես արձանագրենք, որ քանի դեռ նոր, մի այլ ավելի համոզիչ վերծանության տարբերակ չի առաջարկվել, սույն վերծանությամբ պետք է համարենք, որ 1ա պատառիկի ձախ սյունակը սկսվում է «Վարդանանց պատերազմի» Ե. եղանակի 1-2 նախադասությունների մասերով, այնուհետև շարունակվում 5-10 նախադասությունների միջոցով վերականգնված մի նոր հատվածով և ապա միանում է 146-րդ նախադասությանը ԳՀ բնագրից տարբեր մի բոլորովին այլ նախադասությամբ:

Պատառիկի 1ա էջի աջ սյունակն այնուհետև դյուրընթեռնելի է: ԳՀ բնագրի հետ 146-րդ նախադասության տարբերություններն իր տեղում նշել ենք,

ուստի հերթականությամբ, ըստ նախադասությունների նշենք պատառիկի բնագրում առկա էական տարբերությունները<sup>35</sup>:

147-ում պատառիկն ունի «մայրաւորաց երեւիմն», ԳՂ բնագիրը չունի «երեւիմն»:

148-ում «գրեկոբոս նիզակացն» ] «գրեկումն նիզակացն»:

149-ում «վանեալք» ] «վատնեալք»; «դարձեալ զմիմեանս» ] «դարձեալ միսանգամ զմիմեանս»:

150-ում պատառիկն ունի «մինչեւ ի մուտս արեգանն» ] «եւ մինչեւ ի մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն»: Պատառիկում այս նախադասությունը նախորդի շարունակությունն է՝ «դարձեալ զմիմեանս սատակէին մինչեւ ի մուտս արեգանն»:

151-152 – Պատառիկը չունի այս նախադասությունները:

153- Պատառիկն ունի միայն նախադասության կեսը՝ «ճանգի ոչ էր կողմն որ յաղթեաց, եւ կողմն՝ որ պարտեցաւ»: Չունի «այլ քաջք ընդ քաջս ելեալ երկոքին կողմանմն ի պարտութիւն մատնեցան»:

154-155-ը նույնն են երկուսում էլ:

156- Պատառիկում չկա «որ անդէն ի տեղտջն կատարեցան» մասը:

157-167 նախադասությունները մանր տարբերություններով նույնն են:

168-ում Պատառիկն ունի, իսկ ԳՂ բնագիրը ոչ՝ «որք մեծաւ նզնութեամբ վասն սուրբ հաւատոց ի վերայ սուրբ եկեղեցոյ պատերազմեալ կատարեցան ի Ք[րիստո]ս» հատվածը:

169-ի սկիզբը՝ որ պատառիկի առաջին տողում պետք է լիներ, չի պահպանվել: ԳՂ բնագրի «Իսկ ի կողմանէ ուրացելոցն» փոխարեն վերականգնել ենք «Իսկ ի կողմանէ հեթանոսաց» ձևով: Նկատի ենք առել ԳՂ բնագրի տարրնթերցումներից մեկը՝ «ուրացելոցն եւ հեթանոսաց»: Քանի որ պատառիկի տողում կարող էր տեղավորվել այս բառերից միայն մեկը, նախընտրեցինք «հեթանոսաց» բառը, նկատի ունենալով, որ պարսից բանակի զոհված զինվորները չէին կարող «ուրացողներ» կոչվել, այլ միայն «հեթանոսներ»: Հակառակ դեպքում ճակատամարտը պետք է տեղի ունեցած լիներ հայերի և հայերի միջև:

170-ում էական տարբերություն չկա:

171 - Պատառիկն ունի «զի ետես եւթնապատիկ զհարուածս» փոխարեն ԳՂ-ի «Մանաւանդ իբրեւ ետես զանհնարին հարուածսն»: Այնուհետև պատառիկը չունի «...բեկաւ անկաւ զարութիւն ուժոյն իւրոյ...» մինչև

<sup>35</sup> Ոչ էական տարբերությունները տե՛ս հավելվածում վերծանությունների տարընթերցումներում:

2. եղանակի 7-րդ նախադասության «...իբրև ոչ կամաւ իջեալ կացին առաջի, ...»: Փոխարենը այս ամբողջ հատվածի ե. եղանակը, առանց 2-ի վերնագրի, միմյանց է կապվում հետևյալ հատվածով «...իսկ եին ի գնդին Հայոց մասն ինչ յամրոցի, եւ երթեալ զաւրն պարսից գալ ի խաղաղութիւն, որոց եկեալ...» այնուհետեւ ինչպես ԳՂ բնագրում:

2. եղանակի 8-10-ը նախադասությունները պատահիկում և ԳՂ բնագրում քերականական մանր տարբերություններով նույնն են:

Պատահիկի 2բ էջի աջ սյունակը ավարտվում է 10-րդ նախադասությանը հաջորդող երեք տողերով, որտեղ պահպանվել են 10-րդ նախադասության վերջին բառի մասը՝ 18-րդ տողում՝ «երեքտա-սանֆն», 19-րդ տողում՝ «յանխն» և 20-ում «գտեալ» գրերը: 11-րդ նախադասությամբ այս տողերը հնարավոր չեղավ վերականգնել: Դիմելով արդեն փորձված մեթոդին 11-րդ նախադասությունից հետո մինչև վերջ ընկած ողջ միջակայքում «յանխն» մասնիկ և «գտեալ» բառն ունեցող հատվածներ գտանք 42-43 նախադասություններում՝ «գտեալ»ը՝ «գտին» ձևով, իսկ «յանխն»ը՝ «յանխնայ» ձևով: Այս նախադասությունների միջոցով էլ փորձել ենք վերականգնել 18-20-րդ տողերը: ԳՂ բնագրում այս նախադասություններն ունեն հետևյալ պատկերը՝

42 «Եւ գտին անդ գունդ բագում ի զաւրացն աւփունի, որ գերի առնուլ կամէին զամրականս աշխարհին. դարձեալ եւ կարծէին եւս, եթե գանձք նախարարացն անդ իցեն, վասն այնորիկ եւ յանխնայ յուզէին զվայրսն:

43 նա եւ տեսին եւս անդ ի գեղս երկուս, որ գեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել եւս վասն այնր ի նախանձ բարկութեան բրդեցան»:

Նախադասությունների ընդգծված հատվածներով վերականգնվում է պատահիկում պակասող հատվածը, որոնց համադրությամբ, նախադասության հիմնական միտքը, ասելիքը, սահուն շարադասությամբ կարող էր լինել՝

« [...եւ գունդ մի արքունի] յանխն[այ յուզէր զվայրսն,] գտեալ [ անդ ի գեղս երկուս...]»:

Ստորև ներկայացվող աղյուսակը պատահիկի վերականգնված 2բ էջի աջ սյունակի վերջին երեք տողերն են: Ինչպես և նախորդներում, նշված են՝ ձախ կողմում տողերի հերթական համարները, իսկ աջում տողում գրերի հնարավոր քանակը:

18. «ՍՍՆՔՆ: [42-43...եւ գունդ մի արքունի]	21
19. ՅԱՆԽՆ [այ յուզէր զվայրսն,]	20
20. ԳՏԵԱԼ [ անդ ի գեղս երկուս]»	20



Ամբողջացնելով պատառիկի վերծանությունը, ստորև, ըստ գիտական հրատարակության, ներկայացնում ենք Եղիշեի «Վարդանանց պատերազմի» Ե. եղանակը, նախադասություն առ նախադասություն, նկարագրված իրադարձությունների սղագրությունը, դրվագ առ դրվագ նշելով իրադարձությունների առկայությունը պատառիկում:

Ինչպես իր տեղում նշել էինք, պատառիկի 1ա էջում պահպանված երկրորդ տողը (առաջին տողը վնասված է) «Վարդանանց պատերազմի» առաջին նախադասության վերջից է՝ «զբազումս բազում անգամ ի բազում տեղիս», որին միանում է երկրորդ նախադասությունը որոշ կարևոր տարրնթերցումներով<sup>36</sup>: Այնուհետև՝ 3-4 նախադասությունները չկան պատառիկում: 5-10 նախադասությունները այլ շարադասություն՝ առանց ճակատամարտին մասնակցած նախարարների անունների թվարկման (9-րդ նախադասություն), հիմնական միտքը արտահայտում են: Որից հետո չկան ճակատամարտին Հովսեփի և Ղևոնդ երեցների, ինչպես նաև այլ քահանաների ու պաշտոնյաների մասնակցություն մասին դրվագը (11-12), Վարդան Մամիկոնյան սպարապետի զորքի առջև արտասանած ճառը (13-43), զինվորների նկատմամբ նրա տածած հոգատարություն, խնամքի, նրանց զինելու, ոգևորելու, Մակաբայեցոց զրքից հատվածներ կարդալու, այնուհետև զորքը ճակատամարտի դաշտում դասավորելու նկարագրությունը (44-51): Այնուհետև պարսկական զորքի Հեր և Զարևան հասնելը, որտեղ սրանք բանակում և ամրություններ են կառուցում, ապա ասպատակում շրջակա գավառները (52-54), իսկ հետո Առանձնար Ամատունու գլխավորությամբ հայոց զորքի հարձակվելը և պարսից ասպատակող զորաբանակի ջախջախվելը (55-57), Վասակ Սյունի մարզպանի բանագնացներ ուղարկելը հայոց բանակ (58-59), Ղևոնդ երեցի պատասխան խոսքը բանագնացներին (60-111), Ղևոնդի խոսքից հետո պատարագ անելն ու երեխաներին մկրտելը, որից հետո Հայոց զորք երգվում է (112-114): Ապարդյուն բանագնացությունից հետո պարսիկների հայոց ռազմավարության մասին հարցուփորձ անելը մարզպանին և հետո մարտական փղերը ըստ գնդերի տեղաբաշխելը (115-116), մարզպանի պարսիկ զորավարներին ուղղված խոսքը, որից հետո նա պարսից զորքին տարբերանշաններ ու դրոշներ է տալիս ու դասավորում զորքը (117-126): Իսկ նույն ժամանակ սպարապետը մարտական դիրքերով դասավորում է հայոց զորքը (127-132), այնուհետև պատմում է ճակատամարտին կողմերի պատրաստության ու զորքերի նկարագրության մասին (133-136), և հետո ճակատամարտի նկարագրությունը, սպարապետի ներխու-

<sup>36</sup> Երկրորդ նախադասությունում չկան «մառդիկ», «էին», «խնայեցին», «իբրև զանարի», «գոլով վատասիրտ», «կամ» բառերն ու «զի ի նմանէ միայն ... ի միտս իրեանց» հատվածը:

ժելը պարսից բանակի աջ թևը (137-141), պարսից հակահարվածն ու սպարապետի շրջապատման մեջ ընկնելը (142-145):

Հաջորդ 146-րդ նախադասությունում որը մասմբ կա պատառիկում խոսվում է սպարապետի «ոչ սակաւ նախնիրս» գործելու և ապա զոհվելու մասին: Այստեղ մինչև «գործեսց» բառը պատառիկը չունի, այլ 5-10 նախադասությունների միջոցով վերականգնվելով կապվում է նախադասության «յարում եւ ինմն...» մասին և սահուն շարունակվում ինչպես ԳՀ-ում: Ապա ճակատամարտի նկարագրությունն ու ճակատամարտից հետո մինչև ուշ երեկո կոտորածը, մանր խմբագրումներով պատառիկում կա (147-150)<sup>37</sup>: Ճակատամարտից հետո Ավարայրի դաշտի արյունոտ տեսարանի նկարագրությունը պատառիկում չկա (151-152): Սրան հաջորդում է եղիշեի ճակատամարտին տված գնահատականը (153-156)<sup>38</sup>: Մանր տարբերություններով նույնն է ԳՀ-ում և պատառիկում զոհված նախարարների անունների թվարկումն (157-167) ու վասն հավատո նահատակվածների թիվը՝ 1036 հոգի (168)<sup>39</sup>: Այնուհետև պատառիկում հաղորդվում է պարսից բանակի զոհված զինվորների և ազնվական ծագում ունեցողների թիվը, ապա Մուշկան նյուսալավուրտի սրտնեղելու մասին (169-171)<sup>40</sup>:

Շարունակությունը՝ ուր նկարագրվում է Մուշկան նյուսալավուրտի հոգեկան ապրումները, պատառիկը չունի (172-176)<sup>41</sup>: 173-րդ նախադասությունում Մուշկան նյուսալավուրտը ճակատամարտի նման էլքի համար երկյուղում է թագավորին տեղեկացնել: Այնուհետև Վասակի մասին է, թէ ինչպես է նա ամրություններում ապաստանածների դեմ ծրագրում մարտնչել, խոստումներով հորդորում հանձնվել, իսկ զորքն Հայոց չի հավատում տրված խոստումներին: Զ. եղանակի 1-7 նախադասությունները, որ նույնպես պատառիկում չկան, ամրոցում ապաստանածների վրա Մուշկան նյուսալավուրտի

<sup>37</sup> 150-րդ նախադասությունում պատառիկը չունի «միսանգամ», «անդադար լինե՛ր գործ դառնութեանն», մնացածը մանր տարբերություններով նույնն է:

<sup>38</sup> 153-ում պատառիկը չունի «այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան», 156-ում չկա «որ անդէն ի տեղոջն կատարեցան» մասը:

<sup>39</sup> Պատառիկն ունի շարունակություն, իսկ ԳՀ-ն ոչ՝ «որք մեծաւ նզնութեամբ վասն սուրբ հաւատոց ի վերայ սուրբ եկեղեցոյ պատերազմեալ կատարեցան ի Քրիստոս» հատվածը:

<sup>40</sup> 171-ից պատառիկն ունի «զի ետես եթնապատիկ զհարուածս» փոխարեն ԳՀ-ի «Մանաանդ իբրեւ ետես զաննարին հարուածսն»: Այնուհետև պատառիկը չունի «...բեկաւ անկաւ զարտութիւն ուժոյն իւրոյ...» մինչև Զ. եղանակի 7-րդ նախադասության «...իբրեւ ոչ կամաւ իջեալ կացին առաջի...»: Փոխարենը այս ամբողջ հատվածի ե. եղանակը, առանց Զ-ի վերնագրի, միմյանց է կապվում հետևյալ հատվածով «...իսկ եին ի գնդին Հայոց մասն ինչ յամրոցի, եւ երթեալ զսուր պարսից գալ ի խաղաղութիւն, որոց եկեալ...» այնուհետև ինչպես ԳՀ բնագրում:

<sup>41</sup> 172-րդ նախադասությունը կարծես 171-ի ավելի ընդարձակ տարբերակը լինի:

զրդմամբ պարսից զորքերի հարձակման, ձախողման, նորից՝ մի քանի անգամ երդումներով ամրոցում ապաստանածներին հանձնվելու հորդորների և նրանց չհավատալու մասին է: Այնուհետև Բակ անունով զորականի բերդից դուրս գալու, Վասակին ամբաստանելու և գիշերով, յոթ հարյուր զինակիցների հետ միասին բերդից դուրս գալու և փախուստի գիմելու մասին է:

Երկու հարյուր նահատակների վերջին խոսքը պատառիկում և ԳՉ բնագրում քերականական մանր տարբերություններով նույնն են (8-10):

Պատառիկն այնուհետև շունի Հովսեփ և Ղևոնդ երեցների ու նրանց ընկերակիցների հանձնվելու, արքունիք բողոքելու, նրանց գերեվարման մասին պատմությունը: Մյուսները չհավատալով և պարսից խոստումները մերժելով՝ մեկը մյուսին քաջալերում են, թողնում իրենց տները, ապաստան գտնում լեռներում և անտառներում, ապավինում հաղտիքի, Տմորիքի, Արցախի ամրոցներին: Պարսիկները օգնության եկած զորքերով արշավում են երկրի խորքերը, ճակատ տալիս Կապույտ լեռան ամրություններում ապաստանածներին: Իսկ Արշեն անունով մի քահանա հավատալով իջնում է ամրոցից, սակայն նրան եւ նրա ընկերակիցներին գերեվարում են: Իսկ Տմորիքում ապաստան գտածները իջնելով ամրություններից հարձակվում են պարսից զորքերի վրա և ջախջախում: Նույնպես և հաղտիքում ապաստանածները հարձակվում և ջախջախում են Տայքում գտնվող պարսից զորքերը: Այս ամենը պատառիկը շունի (11-41): Եւ վերջապես պատառիկն ընդհատվում է արքունի զորքերի հետապնդումների, ավարառությունների, հայոց հակահարված տալու ու երկու հրկիզված եկեղեցիների մասին դրվագով (42-43)<sup>42</sup>:

Մնում է պատասխանել ամենակարևոր հարցին՝ պատառիկը ձառընտիրի, Հայսմավուրքի, Պատմագրքի մաս է, թե խմբագրված, համառոտված «Վարդանանց պատերազմի» հնագույն, նախնական օրինակի մասունք:

Պատառիկի բնագրում Ե. եղանակի 176 նախադասություններից շուրջ 148-ը (3-4, 5-10, 11-145, 151-152, 172-176), իսկ Զ եղանակի 1-43 նախադասությունների միջև շուրջ 41-ը (1-7; 11-43) այսպիսով պակասում են<sup>43</sup>: Գիտական հրատարակության բնագրի համար օգտագործված ձեռագիր և տպագիր օրինակներից և ոչ մեկը այսօրինակ տարբերություն չունի: Միայն Զ. եղանակի համար ԳՉ ծանոթությունում նշված է, որ 18 ձառընտիրներ «լրիվ տեքստ չեն տալիս, այլ վերապատմում են, մասամբ կրճատում», բոլորովին չունեն 1-104 (կամ 107) նախադասությունները և դրանցում նկարագրված իրադարձու-

<sup>42</sup> Այս երկու նախադասություններով վերականգնվել են պատառիկի 2բ էջի վերջին երեք տողերը:

<sup>43</sup> Պակասող նախադասություններից վեցը մասնակիորեն կամ ամբողջովին ձևափոխված են պատառիկում Ե. եղանակում 4-ը, իսկ Զ. -ում 2-ը:

թյունները: Համառոտելու կամ վերապատմելու իմաստով ինչ որ հարմար է Ձ. եղանակին, որի հիմնական նյութը կարող ենք համարել Տիգրանի դատավարությունը, բոլորովին անմեկնելի է Ե. եղանակի համար, որը գրեթե ամբողջությամբ ներկայացնում է Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը: Ան-իմաստ է անգամ այս ճակատամարտի համառոտելը: Իրադարձությունների ողջ շղթայի մեջ այն ամենակարևորն ու հիմնական դրվագն է:

Իսկական համոտագրումը Հայսմավուրքում «Արաց Բ., Օգոստոսի է. Նահատակութիւն Սրբոց Վարդանանցն ի պատերազմն Պարսից» վերտառությամբ վկայաբանությունն է, որ պատառիկի հետ բաղդատելի չէ: Այն արդեն հայտնի «Վարդանանց պատերազմի» բնագրի մի պարզ սղագրություն է:

Եթե պատառիկի բնագիրը Ճառընտիրի կամ Հայսմավուրքի անհայտ մի խմբագրությունն չէ, ապա կարող ենք արդյոք համարել, որ պատառիկը «Վարդանանց պատերազմի» մի նախնական բնագրի մասունք է, ինչպես ենթադրում էր Գ. Խալաթյանը: Այս ենթադրությունը հեռու չէ իրական լինելուց, եթե ընդունենք, որ նախնական բնագրում չեն եղել Ե. եղանակի Ավարայրի ճակատամարտի, ինչպես նաև Ձ. եղանակի տիգրանյան դատավարության ընդարձակ նկարագրություններն ու է. եղանակում Ղևոնդյանց վկայաբանությունն ամբողջությամբ: Հնարավոր է արդյոք, որ հետագայում եղիշեի բնագրին նախ Ավարայրի ճակատամարտին նվիրված մի ինչ-որ ճառ հավելված լինի, ապա ավելի ուշ տիգրանյան դատավարությունն ու Ղևոնդյանց քահանայից վկայաբանությունը: Այս տեսակետի օգտին չեն արդյոք խոսում «Վարդանանց պատերազմի» եղանակների վերնագրերում հայտնի խճողումների փաստը: Չէ՞ որ մեր ճանաչած «Վարդանանց պատերազմի» բնագրի նախագրությունում հեղինակի կողմից շարադրված եղանակների վերնագրերից միայն առաջին երեքն են նույնանուն, իսկ Գ. եղանակը փոքր-ինչ տարբերությամբ է միայն համապատասխանում բնագրում եղած համապատասխան եղանակների վերնագրերին: Մնացած Ե.<sup>44</sup>, Չ.<sup>45</sup>. և է.<sup>46</sup>. եղանակները նախագրությունում շարադրված

<sup>44</sup> Նախադրությունում Ե. եղանակն ունի «գՅարձակումն արեւելեայց», իսկ բնագրում «Կրկին անգամ ընդդէմ կալ հայոց պատերազմա թագաւորին պարսից» ձևը: Գ-ի համար օգտագործված ձեռագրերից և ոչ մեկում չկա «գՅարձակումն արեւելեայց» ձևով վերնագիր, Ճառընտիրներում հայտնի է նաև «Վկայաբանութիւն սրբոց Վարդանանց» կամ «Պատմութիւն պատերազմին սրբոց Վարդանանցն» ձևով:

<sup>45</sup> Նախադրությունում Ձ. եղանակն ունի «զԸնդդիմանալն Հայոց պատերազմա», իսկ բնագրում «Յորում կարգազիր դարձեալ առափնութիւնն հայոց եւ շարագոյն եւս երեւի անաւելնութիւնն Վասակայ»: Միայն մեկ տպագիր՝ Անձնացոց օրինակն ունի «չյեկաւումն իրացն խոտութեան» ձևը, որը սակայն որպես Ձ. եղանակ ընդունված բնագիրը նաևաչում է որպես է. եղանակ, իսկ որպես Ձ. եղանակ՝ «Պատերազմ հայոց» վերնագրով, նաևաչում է Ե. եղանակի 115-րդ նախադասությունից մինչև վերջ ընկած հատվածը:

վերնագրերից բոլորովին տարբեր վերնագրեր ունեն բնագրում:

Ասպարեզում այս հարցերին նվիրված բազմաթիվ հետազոտություններ ու տեսակետներ կան, որոնք կարող են լրացնել կամ ընդհակառակը հերքել առաջ քաշված վարկածները: Նոր վերծանության առաջ քաշած հարցադրումներին պետք է պատասխանել ոչ միայն պատառիկում պահպանված բնագրի տեքստաբանական-բնագրագիտական քննությամբ, այլև գիտական հրատարակության համար օգտագործված բոլոր տարբերակները, ինչպես նաև «Վարդանանց պատերազմի» ուսումնասիրմանը նվիրված գիտական հարուստ ժառանգությունը նկատի ունենալով:

Ներկա հրապարկման հիմնական նպատակն իրականացրած համարելով, թողնելով Եղիշեի «Վարդանանց պատերազմի» համակողմանի ուսումնասիրությունը եւ մեզ հայտնի «Վարդանանց պատերազմի» մասեր ունեցող պատառիկների հրապարակումը ապագային, ամփոփելով՝ ասենք, որ կիսնի քաղաքային գրադարանի համար 17 ձեռագրում պահպանվող պատառիկն իր առաջին՝ 1893 թ-ի հրապարակումից 115 տարի հետո էլ, նոր վերծանությամբ, էլ ավելի է արժևորվում: Այն հնագույնն է Եղիշեի «Վարդանանց պատերազմի» մասեր պարունակող մեզ հայտնի բոլոր պատառիկներից: Հնագրական տեսանկյունից շահագանց ուշագրավ է և կարող է թվագրվել է-Ը դարերով: Ամենայն հավանականությամբ՝ պատմագրքի մաս է, և ևս մեկ անգամ փաստում է Ե. Տեր-Մինասյանի այն միտքը, թե «Եղիշեի «Վարդանանց պատմության» սկզբնագիրն անկասկած Ե դարի երկրորդ կեսի 460-464 թվականների գործ է», որ գրված է ականատես մարդու կողմից, և որ հետագայում «կարող է մասնակի կետերում ենթարկված լինել որոշ խմբագրման»<sup>47</sup>:

<sup>46</sup> Նախադրությունում է-ն ունի «գՅերկարումն իրացն խոռվոպեան», իսկ բնագրում «Դարձեալ վասն նորին պատերազմին եւ շարչարանաց սուրբ քահանայից» ձևը, որն այլևայլ ձեռագրերում ծանոթ է նաև «Արտաբոյ եպն յեղանակին ուրերորդ՝ վասն շարչարանաց սուրբ քահանայիցն եւ նահատակութեան» վերնագրով, իսկ ճառընտիրների մեծ մասում «Վկայաբանութիւն սրբոց Աւտոնդեանցն» վերտառությամբ:

<sup>47</sup> Տե՛ս Եղիշե, Վարդանի եւ հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմանություն, էջ 16:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Կոնիբերի վերձանությունը	Նոր վերձանություն
1. Ջնջուած	[...]
2. [ ° ] ° ° ՄԻ	[...]ԳԱՄ Ի
3. [ ° ] ԱՐՍ	[...]ՈՎՆ
4. [ ° ] ԵԱԼՔ	[...]ՌԵԱԼՔ•
5. [ ° ] ՄԱՀՈՒ	[...]ՄԱՀՈՒ
6. [ ° ] ՄԻՅԱ	[...]Մ Ի ՅԱ
7. [ ° ] ՉԻՑ	[...]ՉԻՑ•
8. [ ° ] ՅՍԻՐԵԻ	[...]Յ ՍԻՐԵ
9. [ ° ] ° ° Ի	[...]ՈՒԹԻԻՆ
10. [ ° ] ° ԵՆ	[...]ՉԻՆՉ
11. [...]	[...]
12. [ ° ] ԱՅ	[...]ԱՅՂ
13. [ ° ] ԼԸՆ ° Յ	[...]Լ ԸՆԳ <sup>Ա[ստուծո]Յ</sup> ,
14. [ ° ] ԱՆ.ՈՉ	[...]ԱՆ• ՈՉ
15. [ ° ] ՎԱՆԵ	[...]Վ ԱՆԵ
16. [ ° ] ԵԼՈՎՔ	[...]ԵԼՈՎՔ <sup>Կ</sup>
17. [ ° ] ԼԵՅԵԱ	[...]ՂԵՅԵԱ
18. [ ° ] ՔԻ. ՅՈ	[...]ՔԻ• ՅՈ
19. [ ° ] ԱՔՊԻ	[...]ՉԱՓ ՊԱ
20. [ ° ] ՈՒ	[...]ՈՒ

1. Համեմատական աղյուսակ  
պատաստիկ 1ա (Դբ-Գա) էջի ձախ սյունակի հին ու նոր վերձանությունների

Վերծանություն - 1ա (Գբ-Գա)

Գբ	1. <sup>1</sup> [ի սկզբանէ է տեսանել]	1. <sup>146</sup> [նդք հասանելով ի գործ պատե]
	2. [զբազումս բազում ան]ԳԱՄ Ի	2. ԲԱԶՄԻՆ ՈԶ ՍԱԿԱԻ ՆԱԽ
	3. [բազում տեղիս: <sup>2</sup> որ սիր]ՈՎՆ	3. ՃԻՐՍ Ի ՏԵՂԻՈՋՆ ԳՈՐԾԷՐ Ի
	4. [Ա[ստուծո]յ զինու վա]ՌԵԱԼՔ*	4. ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՅՈՐ
	5. [ոչ ինչ զանգիտելով ի] ՄԱՀՈՒ	5. ՈՒՄ ԵՒ ԻՆՔՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵԻ
	6. [անէ անձանց,* կա]Մ Ի ՅԱ	6. ԱՌՆՈՒԼ ԶԿԱՏԱՐԵԱԼ ՆԱՀԱ
	7. [փշտակութիւնէ ըն]ՁԻՅ*	7. ՏԱԿՈՒԹԻՒՆՆ* <sup>147</sup> ԵՒ ՅԵՐԿԱ
	8. [կամ ի խողխողումա]Յ ՍԻՐԵ	8. ԲԵԼ ԳՈՐԾՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
	9. [լեաց,* կամ ի գեր]ՈՒԹԻՒՆ	9. ԱԻՐՆ ՏԱՐԱԺԱՄԷՐ,* ԵՒ ՄԱ
	10. [է ընտանեաց,* առ ո]ՁԻՆԶ	10. ԻՏ ԱՌ ԵՐԵԿԱ ԿԱՐՀԱՏԷՐ.*
Գա	11. [համարեցան զայս ամենայն.]	11. [բազմաց արհասք մահ]
	12. [անցս շարշարանաց.*]ԱՅՂ	12. ՈՒ ՀԱՍԱՆԷՐ* ՄԱՆԱԻԱՆԴ
	13. [միայն միաբան կա]Լ ԸՆԴԴ <sup>Ա[ստուծո]յ</sup> Յ	13. Ի ԹԱՆԶՐՈՒԹԵՆԷ ԱՆԿԵ
	14. <sup>5-10</sup> [Իբրեւ ետես Վարդ]ԱՆ* ՈԶ	14. ԱԼ ԴԻԱԿԱՆՅՆ ՄԱԻՏ ԱՌ ՄՒ
	15. [ինչ զանգիտեաց, այլ ժողո]Վ ԱՆԵ	15. ԻՏ ԽՏԱՅԵԱԼ ԻՔՐԵԻ ԶՓԱ <sup>3</sup>
	16. [լով ամենայն միաբան]ԵԼՈՎՔ <sup>b</sup>	16. ՏԱՀԱՐՍ ՄԱՅՐԱԻՈՐԱՅ ԵՐ
	17. [յԱրտաշատ ընդ եկեղ]ՂԵՅԵԱ	17. ԵԻԵԻՆ* <sup>148</sup> ԱՆԴ ԷՐ ՏԵՍԱՆԵԼ
	18. [ւ սրբոյ ուխտին Յի]Ք[ <sup>ԲԻՍՏՈՍ</sup> ]Ի* ՅՈ	18. ԶՔԵԿՈՐՍ ՆԻԶԱԿԱՅՆ ԵՒ ԶԽ
	19. [րում քաջալերեալ ան]ՉԱՓ ՊԱ	19. ՈՐՏԱԿՈՒՄՆ ԱՂԵՂԱՆՅ*
	20. [տրաստութեամբ համագ]ՈՒ	20. ՎԱՍՆ ԱՅՆՈՐԻԿ * ՈԶ ԿԱՐԵԻՆ

<sup>1</sup> >զբազումս; >զբազումս բազում անգամ:

<sup>2</sup> մարդիք; >մարդիկ; իբրեւ զինու; բազում անգամ զինու: >իբրեւ; վառեալք էին; եւ ոչինչ; >խնայեցին; խնայեցին զանգիտելով իբրեւ զանարի (անարի) գոլով (> գոլով) կամ վատասիրտք (վատասիրտս); >կամ ի մահ անձանց; ի յափշտակութիւն; կամ ի խողխողումս սիրելեաց; ընտանեաց + ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել (անկանիլ) ի ստրկութիւն (ի ստուգութիւն ] ի ստրկութիւն) յատարութեան; համարեցան զայս; զայն; համարելով զայն; շարշարանաց; միաբանեցան; միաբանեալ; ընդ աստուծայ + զի ի նմանէ միայն մի գերի էլցեն. եւ ամենայն երեւելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ (ընտրել; ընդրել; >ընտրեալ) ի միտս իւրեանց:

<sup>5-10</sup> Այս հատվածում պակասում է 8 տող՝ 7-ը ձախ սյունյակի ներքեւում եւ մեկ տող աչ սյունակի վերելում: Պակասող հատվածը վերականգնվել է 5-10-րդ և 146-րդ նախագաստությունների միջոցով:

<sup>146</sup> գործեաց; գործեաց; >ի մեծ պատերազմին; ինքն + յորում տեղոչ եւ ինքն իսկ; >իսկ; նահատակութեանն պսակ:

<sup>147</sup> յերկարեալ; երկարեալ; յերկարիլ; գործոյն; տարածամիւր; >մօտ; առ ընդերեկս; առ երկկոյ; կարճէր; օրահանք; օրինահանք; >հասանէին; >անկեալ; անկեալ դիականացն; ~ դիականցն անկելոյ; անկեալ դիակացն; խթացեալ; >իբրեւ; զփայտահայրս (!); մայրետոբաց; >երեւեին:

<sup>148</sup> գրեկորս; գրեկումն; նիզակաց; իսկ ] եւ; >եւ; ~ գրեկումն աղեղանց եւ զխորտակումն նիզակաց; աղեղանցն; եւ ոչ իսկ; >կարէին; կարէին իսկ:

Վերծանություն - 1բ (Գա-Գբ)

Գա	<ol style="list-style-type: none"> <li>1. <sup>148</sup>[կալ ճշմարտիւ ի վերայ]</li> <li>2. ՍՈՒՐԲ ՄԱՐՄԵՈՅ ԵՐԱՆԵԼԵ</li> <li>3. ԱՅՆ՝. ԵՒ ՍԱՍՏԻԿ ԽՈՒՃԱՊ</li> <li>4. ՏԱԳՆԱՊԻ ԷՐ ԿՈՂՄԱՆՅՆ</li> <li>5. ԵՐԿՈՑՈՒՆՅ ԱՆԿԵԼՈՅՆ՝:</li> <li>6. <sup>149</sup>ԵՒ ՈՐ ՄՆԱՑԵԱԼՔՆ ԵՒՆ՝ ՎԱ</li> <li>7. ՆԵԱԼՔ ԵՒ ՅՐՈՒԵԱԼՔ ԼԻՆԵԻՆ</li> <li>8. Ի ԼԵՌՆԱԳԱՇՏՍՆ = ԵՒ</li> <li>9. ՅԱՄՈՒՐՍ ՁՈՐՈՅՆ՝. ԵՒ ՅՈՐ</li> <li>10. ԺԱՄ ՊԱՏԱՀԵԻՆ ՄԻՄԵԱՆ՝<sup>3</sup>՝</li> <li>11. [ԳԱՐՁԵԱԼ ՁՄԻՄԵԱՆՍ ՍԱ]</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. [էին գունդք մնացելոցն:]</li> <li>2. <sup>155</sup>ԹԵՊ[էտ եւ բազում այն էր]</li> <li>3. ՈՐ ԱՊ[րեցան՝ քան թէ]</li> <li>4. ՈՐ ՄԵ[ռանն, սակայն]</li> <li>5. ՑԱՆԵ[ալ ցրուեցան, եւ]</li> <li>6. ՀԱՍԵ[ալ անկանէին ի տե]</li> <li>7. ՂԻՍ ՏԵ[ղիս յամուրս աշ]</li> <li>8. ԽԱՐՀ[ին, եւ բռնանայ]</li> <li>9. ԻՆ Ի Վ[երայ բազում գաւ]</li> <li>10. ԱՌԱՅ [եւ բերդից, զոր եւ ոչ]</li> <li>11. ՈՔ ԿԱ[րէր առնուլ իսկ:]</li> </ol>
Գբ	<ol style="list-style-type: none"> <li>12. ՏԱԿԵԻՆ՝:</li> <li>13. ԱՐԵԳԱՆ՝</li> <li>14. ԿՈՂՄՆ՝ ՈՐ ՅԱՂԹԵԱՅ՝, ԵՒ</li> <li>15. ԿՈՂՄՆ՝ ՈՐ ՊԱՐՏԵՅԱՒ՝, <sup>154</sup>ԲԱ</li> <li>16. ՅՅ ՔԱՆՁԻ ԱՆԿԵԱԼ ԷՐ ՁԱԽ</li> <li>17. ԲԱՎԱՐՆ ՀԱՅՈՅ Ի ՄԵԾ ՊԱ</li> <li>18. ՏԵՐԱՁՄԻՆ՝, ՈՁ ՈՔ ԳՈՅՐ</li> <li>19. ԱՅՆՈՒՀԵՏԵԻ Ի ՄԷՋ ԳԼԽ</li> <li>20. ԱԻՈՐ՝, ՅՈՐ ՅԵՅԵԱԼ ԺՈՂՈՎ</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>12. <sup>156</sup>ԵՒ Ա[յս անուանք են քաջ]</li> <li>13. ՆԱ[հատակացն]</li> <li>14. <sup>157</sup>ՅԱԶ[գէն Մամիկոնէից]</li> <li>15. ՔԱՋՆ [Վարդան հարեր եր]</li> <li>16. ԵՍՈՒ[ն եւ երեք արամբք.]</li> <li>17. <sup>158</sup>ՅԱԶ[գէն Խորխոռունեաց]</li> <li>18. ԽՈՐԵ[նն կորովի ինն եւ]</li> <li>19. ՏԱ[սն արամբք.]</li> <li>20. <sup>159</sup>ՅԱԶ[գէն Պալունեաց]</li> </ol>

<sup>148</sup> >սուրբ; մարմնոցն; մարմնոց; մարմնոյ; մարմնոյն; երանելոյն Վարդանա] երանելեացն; երանելոյն; >սաստիկ; ի սաստիկ; >էր; տագնապի երկոցունց կողմանցն անգելոց; կողմանց; անկելոցն; անկանելոց;

<sup>149</sup> որք; եւ որ; էին; վատնեալ; լինէին; ի լեռն եւ ի դաշտս; լեռնադաշտսն; լեռնադաշտսն; լեռնադաշտս; ի լեռն եւ ի դաշտս; ամուրս ձորոցն; ձորոյն; պատահէին; դարձեալ +միւսանգամ; դարձեալ անդէն; սատակէին;

<sup>150</sup> եւ մինչեւ ի մուտ; ցմուտս; ցմուտ; արեգականն; արեւուն; - Բոլոր ձեռագրերն այնուհետեւ ունեն՝ արեգանն + անգաղար լինէր գործ դառնութեանն (դառնութեանն): Այս նախադասութիւնը նախորդ 149-ի շարունակությունն է:

<sup>151-152</sup> >151-152 նախադասությունները:  
<sup>153</sup> ոչ + եթէ; ~կողմ էր; եւ կողմ էր; եւ կամ կողմն; եւ կամ կողմ էր որ պարտեցաւ; պարտաւորեցաւ; Բոլոր ձեռագրերն այնուհետեւ ունեն՝ - պարտեցաւ + այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկրքին (երկրքեան) կողմանքն (կողմանք) ի պարտութիւն մատնեցան:

<sup>154</sup> մեծ սպարապետն ] զօրավարն; >մեծ; >ի մէջ; ի միջի; ի մէջ; ~ գլխաւոր ի մէջ; գունդք; գունդն;

<sup>155</sup> ապրեցան; ապրեցաւ; ապրեցանն; քան թէ (>թէ); քան որ եթէ; մեռան; ցրեցան; հասեալք; ի յամուրս; բազում քաղաքաց, գաւառաց եւ բերդաց; ամուր ] բազում; բերդաց; առնուլ իսկ ոք կարէր; առնուլ իսկ կարէր; զոր ոչ ոք առնուլ կարէր; >եւ բերդից, զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր; >զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր:

<sup>156</sup> եւ այս են անուանք; եւ այս էր; նահատակացն+որ անգէն ի տեղուն կատարեցան; >որ անգէն ի տեղուն կատարեցան; որք:

<sup>157</sup> Մամիկովնեից; Մամիկոնեից; Վարդան քաջ; եւ երեսուն; հարիւր եւ յսուն (յիսուն) եւ երեք; արամբ:

<sup>158</sup> Խորխոռունեաց; Խորէն; տասնեւինն; արամբ >Յագգէն Խորխոռունեաց Խորենն Կորովի իննեւտասն արամբք:



Վերծանություն - 2ա (Աբ-Բա)

Աա	1. <sup>159</sup> [արին Արտակ յիտուն] 2. [եւ եւթն արամբբ.] 3. [ <sup>160</sup> Յազգէն Գնթունե]ԱՅ ՉԱՐ 4. [մանալին Տաճատ] Ինն ԵԻ 5. [տասն արամբբ.] 6. [ <sup>161</sup> Յազգէն Գիմաքսե]նիՅ Ի 7. [մաստունն Հմայե]ԱԿ ՔՍԱՆ 8. [եւ երկու արամբբ.]Ք. 9. [ <sup>162</sup> Յազգէն Քաջբերու]նեԱՅ 10. [հրաշակերտն ներ]ՍԵՀ ԵԻ 11. [թն արամբբ.]	1. [եւ եւթն նահատակբ, ընդ] 2. Ինն ՄԵԾ ՆԱԽԱՐԱՐՄԵ ԱՆ 3. ԳԷՆ Ի ՏԵՂԻՈՋՆ ԿԱՏԱՐԵՅԱՆ՝. 4. <sup>167</sup> ԵԻ ՅԱՐՔՈՒՆԻ ՏԱՆԷ ԵԻ Ի 5. ՏԱՆԷՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ԵԻ 6. ՅԻԻՐԱՔԱՆՉԻԻՐ ՅԱՅՂՈՅ ՆԱ 7. ԽԱՐԱՐԱՅՆ ՏԱՆԷ՝ ԹՈՂ ՉԱ 8. ՅՍ ԵՐԿԵՐԻԻՐ ՈՒԹՍՈՒՆ ԵԻ 9. ԵԻԹՆՍ՝ ԱՅՂ ԵԻՍ ԵԻԹՆ ՀԱ 10. ՐԻԻՐ ԵԻ ՔԱՌԱՍՈՒՆ ԱՅՐ՝, ՈՐ 11. ՈՅ ՉԱՆՈՒԱՆՍ ԳՐԵԱԼ ԵՆ Ի 12. ԳՊՐՈՒԹԵԱՆՆ ԿԵՆԱՅ - ՈՐՔ 13. ԿԱՏԱՐԵՅԱՆ Ի ՆՄԻՆ ԱՒՈՒՐ 14. Ի ՄԵԾ ՊԱՏԵՐԱՉՄԻՆ՝. <sup>168</sup> ԵԻ ՄԻ 15. ԱՀԱՄՈՒՌ ԼԻՆԻ ՀԱՉԱՐ ԵԻ Ե 16. ՐԵՍՈՒՆ ԵԻ ՎԵՅ ԱՅՐ՝: ՈՐՔ ՄԵ 17. ԾԱԻ ՃԳՆՈՒԹԵԱՄԲ ՎԱՍՆ 18. ՍՈՒՐԲ ՀԱՒԱՏՈՅՍ Ի ՎԵՐԱՅ 19. ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՊԱՏԵՐ 20. ԱՉՄԵԱԼՔ ԿԱՏԱՐԵՅԱՆ Ի ՔՍ
Բբ	12. [ <sup>163</sup> Յազգէն Գնունեա]Յ ՄԱՆ 13. [ուկն Վահան երիւք] ԱՐԱՄԲԲ. 14. [ <sup>164</sup> Յազգէն Ընծայ]նիՈՅ ԱՐ 15. [դարն Արսէն եւթ]ն ԱՐԱՄԲԲ. 16. [ <sup>165</sup> Յազգէն Սրուանձ]ՏԱՅ ՅԱ 17. [աաջադէմն Գար]ԵԳԻՆ ԵՐ 18. [կու հարազատաւք]ն ԵԻ ՈՒԹ 19. [ուտասն արամ]ԲԲ: 20. [ <sup>166</sup> Այս երկերիւ]ր ՈՒԹՍՈՒՆ	

<sup>159</sup> Տէ՛ս հաջորդ տողի ընթերցումները:  
<sup>159</sup> տասնեւեւթն ] յիտուն եւ եւթն; արամբբ:  
<sup>160</sup> Քնթունեաց; Գնթունեաց; «Գիմաքսեներից, Քնթունեաց, Գնունեաց, Անձեւացեաց, Արուանձ-տա»;> Քաջբերունեաց; տասնեւիսն; արամբբ:  
<sup>161</sup> >իմաստունն; քսան ] քսան եւ երկու; արամբբ:  
<sup>162</sup> արամբբ;  
<sup>163</sup> երեք ] երիւք; արամբբ:  
<sup>164</sup> Անձեւացեաց (Անձաւացեաց) ] Ընծայնոց; Ընձայնոց; Ընծայնոց; Ընձանոց; արամբբ:  
<sup>165</sup> Սրուանձտեա; Սրուանձտայ; Սրաձտա; Սրաւանձտայ; աաաաաադէմ; հարազատաք; ութեւտասն; տասնեւեւթն; արամբբ:  
<sup>166</sup> ութսուն եւ ինն; հինգ ] եւթն; մեծամեծ; ընդ նմին եւ մեծամեծ նախարարքն; ընդ մեծամեծ նախարարարցն որ անդէն; ընդ նմին ինն այր ի մեծամեծ նախարարացն որ անդէն; >ինն:  
<sup>167</sup> տանէն; >եւ ի տանէն; տանէ; >եւ յարքունի տանէն; եւ յարքունի տանէն Արծրունեաց; յայլոց; այլոց; >այլոց; նախարարաց; տանէն; եւթն; եօթն; հնգեանս ] եւթնս; եւ այլ եւս; >եւ; հարեւր; հարիւր ] եւթն հարիւր; որք; որ; զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին (գրեցան) ի նմին աւուր ի մեծ պատերազմին (ի մեծ պատերազմին կատարեցան):  
<sup>168</sup> միահամուռն լինի; լինին; +ամենայնն; +ամենեքեան; ո. եւ լր. (=1034); - Բոլոր ձեռագրերում >որք մեծաւ ճգնութեամբ վասն սուրբ հաւատոց ի վերայ սուրբ եկեղեցւոյ պատերազմեալք կատարեցան ի քս:

Վերծանություն - 2բ (Աս-Բբ)

<p>Աբ 1. [<sup>169</sup> Իսկ ի կողմանէ հեթանոսաց մե]</p> <p>2. ՌԱՆ ՅԱՅՆՄ ԱԻՈՒՐ • ԵՐԵՔ</p> <p>3. ՀԱԶԱՐՔ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՔԱ</p> <p>4. ՌԱՍՈՒՆ ԵՒ ԶՈՐՔ ԱՐՔ: • <sup>170</sup> ԻՆՆ</p> <p>5. ԱՅՐ Ի ՄԵԾ ՊԱՏՈՒԱՌՈՐԱՅ<sup>Ն</sup></p> <p>6. ԷՐ, • ՎԱՍՆ ՈՐՈՅ ԿԱՐԻ ՅՈՅ<sup>Փ</sup></p> <p>7. ԽՈՐ ԽՈՅԵՑԱԻ ՄՈՒՇԿԱՆՆ</p> <p>8. ՆԻՒՍԱՂԱԽՈՒՐՏ: • <sup>171</sup> ԶԻ ԵՏԵՍ</p> <p>9. ԵՒԹՆԱՊԱՏԻԿ ԶՀԱՐՈՒԱԾՍ</p> <p>10. ԳՆԳԻՆ ԻՒՐՈՅ ՔԱՆ ԶՀԱՅՈՅ, •</p> <p>11. <sup>171-7</sup> ԻՍԿ ԵԻՆ Ի ԳՆԳԻՆ ՀԱՅՈՅ ՄԱ</p> <p>Բա 12. ՄՆ ԻՆՁ ՅԱՄՐՈՅԻ, • ԵՒ ԵՐ</p> <p>13. ԹԵԱԼ ԶԱԻՐՆ ՊԱՐՍԻՅ ԳԱԼ</p> <p>14. Ի ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, • ՈՐՈՅ Ե</p> <p>15. ԿԵԱԼ, • <sup>7</sup> ՀՐԱՄԱՅԵԱՅ ՍՊԱՆԱ</p> <p>16. ՆԵԼ Ի ՆՈՅԱՆԷ ԵՐԿԵՐԻՒՐ</p> <p>17. ԵՒ ՏԱՍՆ ԵՒ ԵՐԵՔ ԱՅՐ, <sup>8</sup> • ՈՐՔ</p> <p>18. ԱՂԱՂԱԿԵԻՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ</p> <p>19. ԵՒ ԱՍԵԻՆ. • «ԳՈՀԱՆԱՄՔ</p> <p>20. ԶՔԷՆ Տ[Է]Ր Ա[սառա]Ծ. • ԶԻ ՄԻՆՁ</p>	<p>1. [դեռ շէն են եկեղեցիք եւ]</p> <p>2. ԱՆՔԱ[Կ տաճար վկայից]</p> <p>3. ԵՒ ՄԻ[ԱԲան սուրբ ուխտ]</p> <p>4. ԵԿԵՂ[եցույ առաքինա]</p> <p>5. ՅԵԱԼ, Ա[րժանի արարեր զմ]</p> <p>6. ԵԶ ԿՈԶ[մանդ երկնաւորի:]</p> <p>7. <sup>9</sup> ՀԱԻԱՍ[արեացի մահս մեր]</p> <p>8. ԸՆԳ ՄԱ[Հ քաջ նահատակա]</p> <p>9. ՅՆ, • Ե[Ի խառնեացի արիւ]</p> <p>10. ՆՍ ՄԵՐ[ընդ արիւն անկե]</p> <p>11. ԱԼ ՎԻՐ[ատրացն, եւ հաճ]</p> <p>12. ԵՍՅԻ ՏԵՐ [ընդ եկեղեցիս իւր]</p> <p>13. ԲԱԶՄՈ[Իթեամբ կամաւոր]</p> <p>14. ԶՈՒՐԱ[կացա, որ ելանեն ի]</p> <p>15. ՎԵՐԱՅ Ս[ուրբ սեղանոյ]: <sup>10</sup> Զայս]</p> <p>16. ԱՍԵԼՈՎ[ի տեղւոյն կատարե]</p> <p>17. ՅԱՆ ԵՐ[Կերիւրքն եւ երեքտա]</p> <p>18. ՍԱՆՔՆ: <sup>11</sup>[<sup>42-43</sup> Եւ գումդ մի արհունի]</p> <p>19. ՅԱՆՆՆ[այ յուզէր զվայսն, եւ]</p> <p>20. ԳՏԵԱԼ [անդ ի գիւղս երկուա]</p>
--	--

<sup>169</sup> ուրացելոցն; ուրացելոցն եւ հեթանոսաց; չորք արք; չորս:

<sup>170</sup> այր+ ի նոցանէ; ի մեծամեծ; պատուաւորաց; վասն որոյ եւ; վասն այնորիկ եւ; >եւ; >ի; >ի խոր; Մուշկիան; Մուշկանն; Նիսալաւորտ; Նիսալաւորտ; Նիսալաւորտն:

<sup>171</sup> զի ետես եպնապատիկ գհարուածս ] Մանաւանդ իբրեւ ետես զանհնարին հարուածսն; զհարուածս անհնարին; անհնարին; > անհնարին; եւթնպատիկ; եռապատիկ; զիւրոյ գնդին քան զՀայոցն; իւրոյ գնդին եւթնպատիկ քան զՀայոց; զիւրոց; զՀայոց):

<sup>171-7</sup> Իսկ եին ի գնդին Հայոց մասն ինչ յամրոցի, • եւ երթալ զաւրն պարսից գալ ի խաղաղութիւն, • որոց եկեալ. ] 171 «...բեկաւ անկաւ (անկաւ բեկաւ) զաւրութիւն (ուժոյ նորա; ուժոյ իւրոյ; ուժոյ) ուժոյն իւրոյ, եւ ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն (եւ ոչ կարէր յանդարտել; կարէր ] հանդարտէր; խորհրդոց իւրոց; մտաց իւրոց). Բանգի ոչ (>ոչ) որպէս կարծէր զպատերազմն (պատերազմն) կատարեցաւ:» - Զ.7 «...իբրեւ (>իբրեւ) ոչ կամաւ իջեալ կացին առաջի, ...»:

<sup>7</sup> հրամայեաց (եւ հրամայեաց) սպանանել ի նոցանէ երկերիւր եւ երեքտասան (տասնեւերեք) այր):

<sup>8</sup> միաբան եւ ասեն ամենեքեան; >տէր; մեր; >մեր; որ մինչդեռ; եկեղեցիքս; տաճարք; տաճար; ազօթից մերոց ] վկայից; տաճար վկայից մերոց; եկեղեցոյս; >եւ; >զմեզ:

<sup>9</sup> հաւասարեացի; հաւասարեացէ; ընդ մահու; ընդ արիւնս; ընդ արեան; >արիւն (անկեալ) վիրաւորելոցն; հաճեացի տէր կամարար; եկեղեցի; մեր]իւր; զուարակացն; սեղանոյ քո; սրբոյ սեղանոյ քո; սրբոյ սեղանոյ քո; սրբոյ քո; սրբոյ:

<sup>10</sup> եւ զայս ասացեալ; կատարեցան ի տեղւոյն; երկերիւր եւ երեքտասանքն; երեք տասանքն; երկու հարիւր տասնեւերեք:

<sup>11</sup> >11-42 նախադասութիւնները:

<sup>42-43</sup> Այս երկու տողերը հնարաւոր եղաւ վերականգնել միայն Զ. եղանակի 42 եւ 43 նախադասութիւնների միջոցով:

Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին

Հատվածներ՝ Ե. 1-3, 146-150, 153-171, Զ. 7-11, 42-43<sup>48</sup>:

1. «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. եւ այնպէս աներկեղս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զարս հրեշտակաց, որպէս անդատին // Ղա՝ Գբ-Գա // [ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում ան]գամ ի [բազում տեղիս,

2. որ սիր]ովն [Ա[ստուծոյ] զինու վա]ռեալք՝ [ոչ ինչ զանգիտելով ի] մահու[անէ անձանց,՝ կա]մ ի յա[փշտակութիւնէ ըն]չից՝ [կամ ի խողխողու-մա]ց սիրե[լեաց,՝ կամ ի գեր]ութիւն[է ընտանեաց,՝ առ ո]չինչ [համարեցան զայս ամենայն.] [անցս շարշարանաց.՝] Այդ [միայն միաբան կա]լ ընդ <sup>Ա[ստուծոյ]</sup>՝,

<sup>5-10</sup> [Իբրեւ ետես Վարդ]ան՝ ոչ[ինչ զանգիտեաց, այլ ժողո]վ անե[լով ամենայն միաբան]ելովք<sup>6</sup> [յԱրտաշատ ընդ եկեղ]ղեցեա[ւ սրբոյ ուխտին Յ[իսուս]ի] Ք[րիստոս]ի՝ յո[րում քաջալերեալ ան]չափ պա[տրաստութեամբ համազ]ու 146. [նդք հասանելով ի գործ պատե]րազմին ոչ սակաւ նախնիրս ի տեղտջն գործէր ի մեծ պատերազմին, յորում եւ ինքն արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւնն՝:

147. Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ արն տարածամէր,՝ եւ մաւտ առ երեկս կարնատէր.՝ [բազմաց արհասք մահ]ու հասանէր՝ մանաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականցն մաւտ առ մ՝ւտ խտացեալ իբրեւ զփա՛տահարս մայրաւորաց երեւեին՝

148. Անդ էր տեսանել զբեկորս նիզակացն եւ զխորտակումն աղեղանց՝. վասն այնորիկ ՝ ոչ կարեին // 1բ՝ Գա-Գբ // [կալ ճշմարտիւ ի վե-րայ] սուրբ մարմնոց երանելեացն՝. եւ սաստիկ խունապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոցն՝: 149. Եւ որ մնացեալքն էին՝ վանեալք

<sup>48</sup> Սկզբում և վերջում Գ-ից հավելել ենք նախադասությունների պակասող հատվածները, որոնք ըստ ամենայնի պետք է լինեին պատառիկի նախորդող և հաջորդող էջերում: Ուղիղ գրերով ընդգծված են պատառիկում երևացող հատվածները:

<sup>5-10</sup> Այս հատվածում պակասում է 8 տող՝ 7-ը ձախ սյունակի ներֆետում եւ մեկ տող աչ սյունակի վերետում: Պակասող հատվածը վերականգնվել է 5-10 և 146 նախադասությունների միջոցով:

և ցրուեալք լինեին ի լեռնադաշտսն և յամուրս ձորոցն<sup>49</sup>։ Եւ յորժամ պատահեին միմեան<sup>50</sup>՝ [դարձեալ զմիմեանս սա]տակեին<sup>51</sup>։ 150 Մինչեւ ի մուտս արեգանն<sup>49</sup> 151-152 153. Քանզի ոչ էր կողմն՝ որ յաղթեաց<sup>52</sup>, եւ կողմն՝ որ պարտեցաւ<sup>53</sup>։

154. Բայց քանզի անկեալ էր զաւրավարն Հայոց ի մեծ պատերազմին<sup>54</sup>, ոչ ոք գոյր այնուհետեւ ի մէջ զլիսաւոր<sup>55</sup>, յոր յեցեալ ժողով[եին գունդք մնացելոցն:] 155. Թեպ[էտ եւ բազում այն էր] որ ապ[րեցան՝ քան թէ] որ մե[ռանն, սակայն] ցանե[ալ ցրուեցան, եւ] հասե[ալ անկանէին ի տե]ղիս տե[ղիս յամուրս աշ]խարհ[ին, եւ բռնանայ]ին ի վ[երայ բազում գաւ]առաց [եւ բերդից, գոր եւ ոչ]ոք կա[րէր առնուլ իսկ:]

156. Եւ ա[յս անուանք են քաջ] նա[հատակացն]
157. Յազ[գէն Մամիկոնէից] Քաջն [Վարդան հարեւր եր]եսու[ն եւ երեք արամբք.]
158. Յազ[գէն հորիսոռունեաց] հորե[նն կորովի ինն եւ] տա[սն արամբք.]
159. Յազ[գէն Պալունեաց (2ա՝ Աբ-Բա) արին Արտակ յիսուն եւ եւթն արամբք.]
160. [Յազգէն Գնթունե]աց զար[մանալին Տաճատ] ինն եւ [տասն արամբք.]
161. [Յազգէն Դիմաքսե]նից ի[մաստունն Հմայե]ակ քսան [եւ երկու արամբք]ք<sup>56</sup>։
162. [Յազգէն Քաջբերու]նեաց [հրաշակերտն Ներ]սեհ եւ[թն արամբք.]
163. [Յազգէն Գնունեա]ց ման[ուկն Վահան երիւք] արամբք<sup>57</sup>։
164. [Յազգէն Հնծայ]նոց ար[դարն Արսէն եւթ]ն արամբք<sup>58</sup>։
165. [Յազգէն Սրուանձ]տայ յա[ռաջադէմն Գար]եգին եր[կու հարազատաւք]ն եւ ութ[ուտասն արամ]բք<sup>59</sup>։

166. [Այս երկերիւ]ր ութսո<sup>60</sup> [եւ եւթն նահատակք, ընդ] ինն մեծ նախա-  
րարսն անդէն ի տեղոջն կատարեցա<sup>61</sup>։ 167. Եւ յարժունի տանէ եւ ի տանէն Արծրունեաց եւ յիւրաբանչիւր յայդոց նախարարացն տանէ<sup>62</sup>, թող զայս երկերիւր ութսուն եւ եւթն<sup>63</sup>, այդ ես եւթն հարիւր եւ քսանսուն այր<sup>64</sup>, որոց զանուանս գրեալ են ի դպրութեանն կենաց և որք կատարեցան ի նմին ատուր ի մեծ պատերազմին<sup>65</sup>։ 168. Եւ միահամուռ

<sup>49</sup> Նախորդ 149 նախադասության շարունակությունն է։  
<sup>151-152</sup> Ձկան 151-152 նախադասությունները։

լինի հազար եւ երեսուն եւ վեց այր», որք մեծաւ նզնութեամբ վասն սուրբ հաւատոյս ի վերայ սուրբ եկեղեցոյ պատերազմեալ կատարեցան ի Ք[րիստո]ս»

//2բ՝ Աս-Բբ// 169. [Իսկ ի կողմանէ հեթանոսաց մե]ռան յայնմ ատուր • երեք հազարք հինգ հարիւր քառասուն եւ չորք արք: • 170. Ինն այր ի մեծ պատուաւորաց<sup>6</sup> էր, • վասն որոյ կարի յոյ<sup>7</sup> խոր խոցեցաւ Մուշկանն Նիւսաղաւուրտ, • 171. զի ետես եւթնապատիկ զհարուածս գնդին իւրոյ քան զՀայոց, •


<sup>171-7</sup> Իսկ եին ի գնդին Հայոց մասն ինչ յամրոցի, • եւ երթեալ զաւրն պարսից գալ ի խաղաղութիւն, • որոց եկեալ, • 7. հրամայեաց սպանանել ի նոցանէ երկերիւր եւ տասն եւ երեք այր, 8. • որք աղաղակեին ամենեւեան եւ ասեին. • «Գոհանամք զքէն Տ[է]ր Ա[ստուա]ծ. • Զի մինչ[դեռ շէն են եկեղեցիք եւ] անբա[կ տաճար վկայից] եւ մի[աբան սուրբ ուխտ] եկեղ[եցոյ առաքինա]ցեալ, ա[րժանի արարեր զմ]եզ կոչ[մանդ երկնաւորի:] 9. Հաւաս[արեցի մահս մեր] ընդ մա[հ քաջ նահատակ]ցն, • եւ[ւ խառնեցի արիւ]նս մեր [ընդ արիւն անկե]ալ վիր[աւորացն, եւ հաճ]եցի Տէր [ընդ եկեղեցիս իւր] բազմո[ւթեամբ կամաւոր] զուարա[կացս, որ ելանեն ի] վերայ ս[ուրբ սեղանոյս]: 10. Զայս] ասելով[ի տեղուջն կատարե]ցան եր[կերիւրքն եւ երեքտա]սանքն:

11.<sup>11</sup> [<sup>42-43</sup> Եւ գունդ մի արքունի] յանխն[այ յուզէր զվայրսն, եւ] գտեալ [անդ ի գիւղս երկուս, որ զեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել եւս վասն այնր ի նախանձ բարկութեան բողեցան]:»


<sup>171-7</sup> Իսկ եին ի գնդին Հայոց մասն ինչ յամրոցի, • եւ երթեալ զաւրն պարսից գալ ի խաղաղութիւն, • որոց եկեալ, ] 171 «...բեկաւ անկաւ (անկաւ բեկաւ) զաւրութիւն (ուժոյ նորա; ուժոյ իւրոյ; ուժոյ) ուժոյն իւրոյ, եւ ոչ հանդարտեւ կալ ի վերայ խորհրոց մտացն (եւ ոչ կարէր յանդարտել; կարէր ] հանդարտէր; խորհրոց իւրոց; մտաց իւրոց). քանզի ոչ (>ոչ) որպէս կարծէր զպատերազմն՝ (պատերազմն) կատարեցաւ:» - Զ.7 «...իբրեւ (>իբրեւ) ոչ կամաւ իջեալ կացին առաջի, ...»:

<sup>11</sup> Զկան 11-42 նախադասութիւնները:

<sup>42-43</sup> Ամբողջ Զ. եղանակով փնտրելով «յանխն» գրերը եւ «գտեալ» բառը պարունակող բառեր եւ նախադասութիւններ, այս երկու տողերը հնարատու եղաւ վերականգնել միայն 42 եւ 43 նախադասութիւնների միջոցով:




Պատարիկ 1ա (Գբ-Գա)



Պատասխիկ 1բ (Դա-Գբ)







Պատարիկ 2բ (Աբ-Բա)

